

18309

Լ Կ Ո Ր Ր Ա Դ Ո Վ

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն  
Դ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը

Գ Ե Տ Է Ր Ա Տ

Ք Ա Ղ Ա Բ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Է Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն • 1 9 8 8

327

Կ-78

327  
4-78


JAN 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

27 SEP 2006

Տ. ԿՈՐՐԱԴՈՎ

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն  
Դ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ը



52 48102

Պ Ե Տ Ը Ր Ա Տ  
Ի Ա Ղ Ա Ի Ա Կ Ա Ն Ե Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ա Ն Լ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Զ Ո Ր Թ Յ Ո Ր Ե Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն ● 1938



60184.67

T. KOPPAĐOV  
МЕЖДУНАРОДНОЕ ПОЛОЖЕНИЕ  
Армения—Издательство ПОЛИТ. литературы  
Ереван—1938

Ֆաշիստական ագրեսիան, վոր վերջին տարիներս միլիոնա-  
վոր մարդկային կյանքեր և հսկայական նյութական արժեքներ  
և վնասներ, թուլանալու վոչ մի նշան չի ցույց տալիս:

Մանջուրիայի զավթումը ճապոնական իմպերիալիստների  
կողմից 1931 թվին, իտալական Փաշիզմի տեսած դատաստանը  
խաղաղ հարեչական բնակչության գլխին, իտալո-գերմանա-  
կան ինտերվենցիան Իսպանիայում, ճապոնական զորքերի նոր  
ներխուժումը Չինաստան, Ալստրիայի բռնի միացումը Փաշիս-  
տական Գերմանիային, լեհական ուլտիմատումը Լիտվային, Չե-  
խոսլովակիայի գլխին կախված սպառնալիքը,—այս ամենն ա-  
ռանձին ետապներ են ագրեսորների զավթողական ձգտումների  
ընդհանուր պլանում, այն ագրեսորների, վորոնք ձգնում են  
դուրս բերել աշխարհի նոր վերաբաժանումը: Ագրեսիայի  
անընդհատ աճման համար պակաս պատասխանատվություն չեն  
կրում նաև այսպես կոչված բուրժուական-դեմոկրատական պե-  
տությունները. իրենց թողալու թաղաքականությունը նրանք  
ագրեսորների համար ստեղծել են լիակատար անպատժելիություն  
միջոցառում:

ԳԵՐՄԱՆԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԻ ՇԻՄՆԱԿԱՆ ՈՋԱԽՆ Ե  
ՅԵՎՐՈՊԱՅՈՒՍ

Պատերազմի վտանգի հիմնական ոլջախը Յեվրոպայում,—  
ինչպես մասնանշել է ընկեր Մտալինը,—Փաշիստական Գերմա-  
նիան է: Ալստրիայի զավթումը և Չեխոսլովակիայի վրա կատար-  
վելիք գերմանական հարձակման անմիջական սպառնալիքն ու-  
ժեղացնում են պատերազմ ծագելու վտանգը Յեվրոպայի այդ  
մասում: Ասենք, դժվար է այնպիսի անկյուն ճարել Յեվրոպա-  
յում, վորը դեպի իրեն չզբաղի գերմանական Փաշիզմի դիշատիչ  
հայացքը, այն Փաշիզմի, վորը ձգտում է հաստատել գերմանա-

կան «ոսասյի» գերիշխանութիւնը, ուրիշ խոսքով՝ գերմանական ֆինանսական կապիտալի գերիշխանութիւնն ամբողջ աշխարհում :

Ֆաշիստական Գերմանիան, հակառակ բոլոր միջազգային պայմանագրերին, վորոնք սպառնում էին Ալստրիայի անկախանութիւնը, ներխուժեց այդ յերկիրը և բռնի կերպով նրան միացրեց «Յերրորդ կայսրութեանը» : Յենլ իր քաղաքական պատմութիւնն ու ազգային կուլուրան ունեցող ինքնուրույն պետութիւնը 24 ժամվա ընթացքում դարձից գերմանական գաղտնեւոր մեկը : Ալստրիան վորպէս անկախ յերկիր այլևս գոյութիւն չունի : Յոթ միլիոնանոց ալստրիական ժողովուրդն ընկալ գերմանական Ֆաշիզմի լծի տակ : Ալստրիական քաղաքներում ու գյուղերում հաստատուում է կամայականութեան և տնտրի նույն ուժիւրը, վորը Գերմանիային դարձրել է համակենտրոնացման ճամբար :

Գերմանական Ֆաշիզմը յերկար տարիներ ընթացքում ձրգտում էր «անշյուտի», այսինքն՝ Ալստրիայի միացմանը, վորը նպատակ ու ստրատեգիական դիրք է գրավում Յեյրոպայում : Ալստրիայի գալթումը դյուրացնում է Ֆաշիստական Գերմանիայի ուղղման և տնտեսական թափանցումը Բալկանյան յերկրները—Հունգարիա, Հարավսլավիա և Ռումինիա : «Յերրորդ կայսրութիւնը» անգորեն պատերազմի յե պատրաստուում : Նրան հրապուրում են Ալստրիայի բնական հարստութիւնները, ածուխը և յերկաթահանքերը, վորոնց շերտերը Շտիրիայում բաղական նշանակալից են : Հիտլերը միաժամանակ ուզում է ոգտագործել ալստրիական արդյունարերութեան առավել դարդացած ճյուղերը—մետալուրգիան և մեքենակառուցումը՝ գերմանական ուղղման արդյունարերութիւնն ընդլայնելու համար :

Ալստրիան գալթելով՝ Հիտլերը հարձակում է պատրաստում Չեխոսլովակիայի վրա : Փոքրիկ գեմոկրատական Չեխոսլովակիան, վորն իրը մի նեղ հողաշերտ ընկած է Յեյրոպայի բուն կենտրոնում, չընկալուած է Ֆաշիստական և կիսա֖աշիստական պետութիւններ յողակով : Այդ չընկալուած մեջ չեխոսլովակյան ժողովուրդն ապրում է հարձակման մշտական սպտոնալիքի տակ : Սեպի նման խրված լինելով ազրեսոր պետութիւնների և նրանց աղակիցների տերիտորիաների մեջ, Չեխոսլովակյան հանրապետութիւնը խոչընդոտ է հանդիսանում Գերմանիայի հետագա առաջխաղացման ճանապարհին՝ դեպի Յեյրոպայի արևելքն ու հարավ-արևելքը :

Ֆաշիստական Գերմանիայի ախորժակը գրդում են Չեխոսլովակիայի բնական հարստութիւններն ու բարձր զարգացման հասած արդյունարերութիւնը : Չեխոսլովակիան հարուստ է ածխով, յերկաթով, կապարով, այսինքն՝ հումքի հենց այն տեսակներով, վորոնց պակասն ոգում է գերմանական ուղղման արդյունարերութիւնը : Չեխոսլովակիայի ուղղման գործարանները, վորոնք պատրաստում են արդիական բարձրորակ սպտաղինում, համաշխարհային հռչակ են վայելում : Չեխոսլովակիայի դյուրանտնտեսութիւնը գտնվում է շատ բարձր մակարդակի վրա, թեպէտև լիովին չի բաղարարում յերկրի պահանջմունքները :

Ալստրիայի բռնի միացումը, Հիտլերի ազրեսիվ պլանները Չեխոսլովակիայի, Ռումինիայի և Հունգարիայի նկատմամբ՝ արտացոլում են գերմանական իմպերիալիզմի վաղեմի յերազները, այն է՝ ստեղծել «Միջին Յեյրոպա» գերմանական վերահսկողութեան ներքո : Այդ պլանների իրագործումը հնարալորութիւն կտար Գերմանիային խոչընդոտելու պետութիւնը դառնալու յեյրոպական մայր ցամաքում :

Ալստրիայի կլանումը, անշուշտ, պէտք է նախապատրաստի սպառացում նաև Հարավային Տիրոլի անջատումն Իտալիայից, վորը մինչև 1914—1918 թ. թ. պատերազմը մտնում էր Ալստրո-հունգարական միապետութեան կազմի մեջ : Գերմանական Ֆաշիզմի ընդարձակ պլաններում նախատեսված է Իտալիայի նաև հյուսիսային մարզերի գալթումը, վորոնք Գերմանիային յեղկալային դեպի Ազրիատական, հեռևարար և դեպի Միջերկրական ծովը : Այդ դիտալորութիւնը պայծառ արտահայտութիւն գտալ Շախտի ճառում, վորն Ալստրիայի գրալումից հետո Վիեննայում հայտարարեց. «Այժմ Նիբելունդների ճանապարհը դեպի ծովն՝ ազատ է» :

Ֆաշիստական Գերմանիան միայն ժամանակալորայես է հետաձգում այս խնդիրների իրագործումը, ձգտելով նախորդ Ֆաշիստական Իտալիային ոգտագործել իր նպատակների համար :

Արդեն այժմ, Ալստրիայի գալթումից և անմիջական իտալո-գերմանական սահման ստեղծելուց հետո, Ֆաշիստական Իտալիան լուրջ կերպով կախված է Գերմանիայից, վորը լիակատար հնարալորութիւն ունի վերահսկողութեան յենթարկելու Իտալիայից դեպի Դունայի ալազանը տանող ճանապարհը : Իսկ հյուսիսային մարզերը—Հարավային Տիրոլը, Տրիգենտինյան վենետիկը և մյուն. կորցնելու դեպքում—Մուսոլինին ստիպված

Կլինիկ վերջնականապես հաշտվել «Յերրորդ կայսրութեան» վաստալը լինելու աննախանձելի դերը հետ, «Յերրորդ կայսրութեան», վորն ունի ուղղմական և արդյունաբերական անկասկած անվելի մեծ պոտենցիալ: Հիտլերի ճառը, վոր նա մայիսի 7-ին Հոտոմում արտասանեց իտալո-գերմանական բանակցութեանը ժամանակ, վոչ այլ ինչ է, բայց յեթե իտալիայի վերաբերմամբ գերմանական խնամակալութեան անսքող հայտարարութեան:

Կենտրոնական Յեվրոպայում ազրեսիա կիրառելու հետ միաժամանակ գերմանական Փաշիզմը պատերազմի յե պատրաստվում Ֆրանսիայի դեմ, նպատակ ունենալով զավթելու Ելզաս-Լոթարինգիան և Ֆրանսական այլ տերիտորիաներ ու Ֆրանսիան զարձնելու յերրորդ կարգի պետութեան: Ծիշտ է, գերմանական զինվանագիտութեանը փորձում է ապացուցել չափից ավելի դյուրահաստ Ֆրանսական քաղաքական գործիչներին, վոր Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև այլևս տերիտորիալ վեճեր չկան: Մակայն բավական է դիմել Հիտլերի «Իմ պայքարը» գրքին՝ հասկանալու համար, վոր Գերմանիան շարունակում է Ֆրանսիային իր մահացու թշնամին համարել:

Այդ գրքում, վորը գերմանական Փաշիզմի ավետարանն է հանդիսանում, Հիտլերը գրել է.

«Գերմանական ազգի քաղաքական կտակն իր արտաքին գործունեությունից վոլորում՝ կլինի և պետք է միշտ ասի.—յերբեք թույլ մի տվեք, վոր յերկու մայր-ցամաքային պետութեաններ գոյանան Յեվրոպայում: Ամեն մի փորձ,—վորի նպատակը կլինի գերմանական սահմանների վրա կազմակերպել յերկրորդ ուղղմական տերութեան, թեկուզ այդ լինի պետութեան այնպիսի գոյացման ձևով, վոր ընդունակ է դառնալու ուղղմական տերութեան,— դուք պետք է ընդունեք վորպես հարձակում Գերմանիայի վրա և համարեք վոչ միայն ձեր իրավունքը, այլև ձեր պարտականութեանը՝ բոլոր միջոցներով, ընդհուպ մինչև զենքի ուժ գործադրելը, արդելք հանդիսանալ այդպիսի պետութեան գոյանալուն, իսկ յեթե այդպիսի պետութեան գոյացել է, ապա ուրեմն նորից նրան ջախջախել»:

Հարկավոր է արդյոք ավելի ցայտուն ապացույց այն բանի, վոր Հիտլերյան Գերմանիան Ֆրանսիայի ջախջախումը համարում է իր հիմնական խնդիրներից մեկը, վորի իրացումից նա կամովին յերբեք չի հրաժարվի:

Իսպանիայում կատարվող գերմանական ինտերվենցիայի նպատակն է՝ ստրկացնել իսպանական ժողովրդին և տիրապետել

Պիրենեյան թերակղզու բնական հարստութեանը: Իսպանիան, վորի ընդերքում կա անուխ, յերկաթի հանք, դուռավոր մետաղներ և ուրիշ ոգտավետ հանածոներ,—խիստ գրավիչ որջեկտ է հանդիսանում գերմանական Ֆինանսական կապիտալի համար: Մակայն Իսպանիայում կատարվող գերմանական ինտերվենցիայի հիմքն է կազմում մի ձգտում, այն է՝ Իսպանիան դարձնել Հենարան-բազա նոր զավթումների համար, դարձնել սլացղարմ ընդգեմ Ֆրանսիայի:

Գերմանիան միտք չունի բավարարվելու յեվրոպական մայրցամաքում կատարելիք նվաճումներով: Հիտլերն ավելի ու ավելի մեծ համառութեամբ պահանջում է գաղութներ Ասիայում և Աֆրիկայում: Գերմանիայի գաղութային նկրտումները հիմնականում ուղղված են Բրիտանական կայսրութեան տիրապետութեաններին, վորն ամենահարուստ գաղութային տերութեանն է աշխարհում:

Գերմանական Փաշիզմի հակաբրիտանական ձգտումը, սակայն, չի սահմանափակվում գաղութային տիրապետութեաններ վերաբառանման սլանով. Հիտլերյան Գերմանիայի քաղաքական ղեկավար գործիչների արտահայտումները տարակուս չեն թողնում այն մասին, վոր գերմանական Փաշիզմը Ֆրանսիային ջախջախելու հետ միաժամանակ հարված է պատրաստում նաև անմիջականորեն Անգլիայի համար: Բրիտանական կայսրութեան քայքայումը, Փաշիստական կառավարիչների մտքով, պետք է Հիտլերյան Գերմանիայի համար հեշտացնի համաշխարհային գերիշխանութեան նվաճումը: Բեյլիայի և Հոլանդիայի դեմ ուղղված գերմանական սպառնալիքն անմիջականորեն կապված է Ֆրանսիայի ու Անգլիայի դեմ կատարելիք ազրեսիայի նախապատրաստման հետ, ըստվորում վերջին յերկուսին գերմանական իմպերիալիզմը համարում է իր հիմնական հակառակորդները:

Գերմանական իմպերիալիզմը մշակում է Սկանդինավյան և Արեւմտալիցիան պետութեանների զավթման սլանները: Գերմանիան այդ յերկրներն ուզում է դարձնել իր հուճքային բազաները և սլացղարմը Խորհրդային Միութեան դեմ զավթողական պատերազմ մղելու համար: Տվյալ ետապում Գերմանիան ձգտում է ամբապնդել իր դերքերն այդ յերկրներում՝ իր գործակալութեան—տեղական Փաշիստական կազմակերպութեանների ոգնութեամբ քայքայիչ և դիվերսիոն աշխատանք կատարելով:

Լեհաստանը, վորը հլու-հնազանդ կատարում է Բեռլինի իր տերերի ցուցումները, նույնպես, ինչպես և Գերմանիային սահ-

մանամերձ մյուս պետութիւնները,—Փաշխտական ազրեսիայի որչեկտն է հանդիսանում: Գերմանական Փաշիզմն ամենին չի հաշտվել Վերին Միլիտարի կորցնելու և Լեհական միջնացքի առկայութեան հետ, վորն Արեւելյան Պրուսիան բաժանում է Գերմանիայի մյուս մասից:

Զգտելով ամենից առաջ Լեհաստանն ուղտազործելու Չեխոսլովակիայի և ԽՍՀՄ դեմ կատարելիք ազրեսիայի համար, Հիտլերն աշխատում է ըողարկել Լեհաստանի նկատմամբ ունեցած իր զավթողական պլանները: Հիտլերյան պլանների համաձայն Լեհաստանը պետք է լինի, իբր թէ, չեղոք, բայց իրոք հակախորհրդային պետութիւնների այն բլոկի կազմակերպիչը և միջուկը, վորն ընդգրկելու յե Խորհրդային Միութեան ամբողջ արեւմտյան սահմանը՝ Սև ծովից մինչև Բալթիկ ծով: Լեհաստանը պետք է, հիտլերականների մտքով, իր արեւելյան սահմանը Գերմանիային տրամադրի «վարկով», այսինքն՝ հնարավորութիւն տա՝ գերմանական զորքերին ներխուժելու ԽՍՀՄ:

Սակայն, իր զավթողական պլանները պատրաստելով, Հիտլերը հարկադրված է հաշվի առնել այն դիմադրութիւնը, վոր կարող է գերմանական ազրեսիային ցույց տրվել այս կամ այն խաղաղ պետութեան կողմից: Գերմանիային, ինչպես և ամբողջ աշխարհին հայտնի յե Խորհրդային Միութեան հզորութիւնը, վորն ունի անսպառելի արդյունաբերական և դյուղատնտեսական բազա: Խորհրդային Միութեան ստեղծել է հուժկու բանակ, վորը հազեցված է ժամանակակից ռազմական տեխնիկայի բոլոր տեսակի զործիքներով: Այդ բանակին աջակցում են Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդները, վորոնք պատրաստ են Լենինի—Ստալինի կուսակցութեան իմաստուն ղեկավարութեամբ մինչև արյան վերջին կաթիլը կռվելու իրենց սոցիալիստական հայրենիքի համար:

### ԻՏԱԼԻԱՅԻ ԶԱՎԹՈՂԱԿԱՆ ԿԿՐՏՈՒՄՆԵՐԸ

Իտալական Փաշիզմի արտաքին-քաղաքական պլաններն ունենւմ լիջ պակաս ազրեսիվ բնույթ, քան գերմանական Փաշխտաների դիտավորութիւնները: Մուսոլինին, ինչպես հայտնի յե, քարոզում է «յերկրորդ Հռոմեական մեծ կայսրութիւն» ստեղծելու զառանցական գաղափարը: Նա ուզում է, վոր իտալական իմպերիալիստների տիրապետութիւնը տարածվի Միջերկրական, Սև ու Կարմիր ծովերին կից զամբողջ հողերի վրա, աֆրիկական

ամբողջ մայր ջամաքի, Լատինական Ամերիկայի ու մինչև անգամ Ավգանտանի և Իրանի հեռավոր տերիտորիաների վրա:

Փաշխտական ազրեսիայի առաջին անորինակ ակար իտալիայի հարձակումն էր Հարեչատանի վրա: Այդ հարձակման արդյունքը յեղավ այն, վոր Հարեչատանը վերածվեց իտալական գաղութի և ստրկացվեց ազատասեր հարեչական ժողովուրդը:

Հարեչական ժողովուրդը, վորն արիարար պաշտպանում էր իր անկախութիւնը, քաջաբար կռվում էր ժամանակակից տեխնիկայով զինված թշնամու դեմ, այժմս էլ չի դադարեցրել պարտիզանական պատերազմը իտալական կոլոնիզատորների դեմ: Փաշխտական զավթիչները խիստ անվստահ են զգում իրենց «հաղթած-նվաճած» Հարեչատանում: Վերջերս հարեչական պարտիզանների 10-հազարանոց ջոկատին հաջողվեց շրջապատել Այդիս Արբրան, վորի պաշարումը տեւեց յերեք շաբաթ: Իտալական խոշոր ռեժիսիւն ուժեր տեղ հասնելուց հետո միայն պարտիզաններն ստիպված յեղան նահանջել դեպի անդլիական Կենիա գաղութին սահմանակից մարզը: Ուստի գարմանայի չէ, վոր իտալական Փաշխտաներն այժմս էլ հարկադրված են Հարեչատանում 300-հազարանոց ոկուպացիոն բանակ պահելու, վորի ծախսը ծանր բեռ է առանց այն էլ հյուծված իտալական Ֆիւնանսների համար:

Իտալիան Արեւելյան Աֆրիկայում, Հարեչատանի և իտալական գաղութներ՝ Երիտրէի և Սոմալիի տերիտորիաներում պլացդարմ է ստեղծում Անգլիայի հիմնական դիրքերի վրա հարձակվելու համար, Անգլիայի, վորը Փաշխտական Իտալիայի դիտավոր ակոյանն է Միջերկրական և Կարմիր ծովերի սահմանակից արեւելյան մասի յերկրներում: Հարվածը պատրաստվում է առաջին հերթին Յեզիպոսի դեմ, Անգլո-յեզիպոսական Սուդանի, Պաղեստինի և արաբական յերկրների դեմ:

Փաշխտական Իտալիան մի շարք տարիների ընթացքում ձգտում էր ամրացնելու իր քաղաքական ու տնտեսական դիրքերը Սվաբիայում և Հունգարիայում: Այդ դիրքերը նրան հարկավոր են իտալական Ֆինանսական կապիտալի գերիշխանութիւնը Դունայան և Բալկանյան Յեվրոպայի նաև մյուս յերկրներում հաստատելու համար:

Իտալիան աղքատ է ստրատեգիական հումքով և շատ մեծ չափով կախված է Դունայի ավազանում գտնվող յերկրներից, վորոնց նա համարում է այդ հումքի աղբյուր և պարենային բազա: Բայց բանն այն է, վոր հենց այդպես է նայում

այդ յերկրներն իրա նաև գերմանական Փաշիզմը, վորը պատե-  
րազմի իր սլաններում հաշվի յե առնում ուումինական նավթը,  
հունգարական ցորենը, հարավսլավյան բոքսիտը (հանք) և այլն:  
Իտալիայի ու Գերմանիայի միջև չի գաղարում պայքարը՝ Բալ-  
կաններում, Յեվրոպայի կենտրոնական և հարավ-արևելյան յեր-  
կրներում քաղաքական և տնտեսական ազդեցութուն ձեռք բե-  
րելու համար: Սակայն հարեչական ավանտյուրայի հետևան-  
քով, վորը հյուսիս իտալական Ֆինանսները, իտալական Փաշիզմի  
համար զգայի չափով զժվարացավ դեպի այդ յերկրները կատար-  
վող գերմանական թափանցման դեմ պայքարելը: Ավստրիայի  
միացումը Գերմանիային, բնականարար, ավելի ևս վատթարա-  
ցրեց Իտալիայի դրությունը:

Անշուշտ, սխալ կլիներ ընդունել, վոր Փաշիստական Իտա-  
լիան վերջնականապես հաշտվել և այդպիսի դրության հետ: Ա-  
պագայում անխուսափելի յե իտալո-գերմանական հակասու-  
թյունների սրվելը, Հարավ-արևելյան Յեվրոպայում ազդեցու-  
թյուն ձեռք բերելու համար մղվող պայքարի ուժեղացումը: Ի-  
տալիան արդեն հենց հիմա էլ հակառակում և Գերմանիայի այն  
ձգտումին, վորի նպատակն է՝ յեղ ստանալ դեպի Ադրիատա-  
կան ծովը, և հենց այդ պատճառով էր Մուսոլինին վերջերս  
Հիտլերի հետ ունեցած բանակցությունների ժամանակ այնպես  
պաշտպանում իր պահանջները Հարավսլավիայում գերակառող  
ազդեցություն ունենալու վերաբերմամբ: Այդ բանակցություն-  
ների հետևանքով տեղի ունեցավ ազդեցության վոյորանների բա-  
ժանում Գերմանիայի ու Իտալիայի միջև: Գերմանիան պահանջ-  
ներ հայտնեց կենտրոնական Յեվրոպայի—Չեխոսլովակիայի,  
Հունգարիայի, Ռումինիայի, նաև Բուլղարիայի ու Քյուրդիայի  
նկատմամբ, Իտալիան—Միջերկրական ծովի—Հարավսլավիայի,  
Ալբանիայի և Հունաստանի նկատմամբ:

Հարեչատանի զավթումն հետևանք էր իտալական Փաշիզմի  
այն ձգտման, վորի նպատակն էր՝ իր համար գերիշխող դիրք  
ապահովել Միջերկրականի արևելյան մասում և Կարմիր ծովի  
ափագանում, իսկ Իսպանիայում կատարվող ինտերվենցիայի  
նպատակն է՝ իտալական գերիշխանությունը հաստատել Միջեր-  
կրական ծովի արևմտյան մասում: Իտալիան ձգտում է Միջեր-  
կրական ծովից դուրս մղել Անգլիային, վորի բազաները Միջեր-  
կրական ծովի արևմտյան մասում—Ջիբրալտարը և Մալտան—  
անհանգստություն են առաջ բերում իտալական խմբերի լիտանե-  
րի մեջ: Փաշիստական Իտալիան միաժամանակ փորձում է թու-

լացնել Ֆրանսիայի ստրատեգիական դիրքը, վորի ամենակարևոր  
գաղութները—Թունիսը, Ալժիրը և Մարոկոն վաղուց ի վեր  
Մուսոլինիի ուշադրությունն են դրավում: Մուսոլինիի տերի-  
տորիալ նկրտումները Ֆրանսիայի վերաբերմամբ՝ չեն սահ-  
մանափակվում գաղութային պահանջներով,—իտալական Փաշիզ-  
մի թալանչիական սլաններն մեջ է մտնում նաև Ֆրանսական  
տերիտորիաների—Կորսիկայի, Նիցցայի և Սափոյայի զավթումը:

Իսպանիայում կատարվող իտալական ինտերվենցիան ստրա-  
տեգիական նկատառումներից զատ՝ բացատրվում է Պիրենեյան  
թերակղզու բնական հարստություններին տիրանալու ձգտումով:

Գերիշխող դիրքը Միջերկրական ծովում, և առանձնապես  
նրա արևմտյան մասում, մինչև վերջին ժամանակներս պատկա-  
նում էր Անգլիային ու Ֆրանսիային: Փաշիստական Իտալիան  
բազաներ գրեթե չուներ Միջերկրականի ավազանի սահմանե-  
րում, այն ավազանի, վորը տարածվում է Ջիբրալտարից մինչև  
Միցիլիա:

Փաշիստական պետությունների կողմից իսպանական ժողո-  
վրդի դեմ մղվող զավթողական պատերազմը խիստ կերպով փո-  
խեց ուժերի հարաբերակցությունը Միջերկրական ծովի արև-  
մտյան մասում: Բալեարյան կղզիները, բացի Մինորկա կղզուց,  
վեր են ածվել իտալական ողային և ծովային բազայի, վորը  
կարող է ողտազորովել Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ գործու-  
ղություններ կատարելու համար: Ճիշտ է, ըստ «Ջենովեհա-  
կան համաձայնության»,—վորը կնքվել է Անգլիայի ու Իտալիա-  
յի միջև 1937 թ. հունվարի 2-ին և հաստատվել է 1938 թ. ապ-  
րիլի 16-ին,—իտալական կառավարությունը պարտավորվել է  
չամբարանել և ազատել Բալեարյան կղզիները: Սակայն այդ հա-  
մաձայնությունը մնաց վորպես թղթի կտոր և ծառայեց վորպես  
բողարկում և ազդանշան իտալական ինտերվենցիան Իսպանիա-  
յում ուժեղացնելու համար:

Ջիբրալտարին անմիջականորեն սահմանամերձ իսպանական  
Մարոկոն և իսպանական մարզերը գերմանական և իտալական  
Փաշիստների կողմից ամբացվում են ի հակակշիռ անգլիական  
ծովային այն ամբողջի, վորը զտնվում է Միջերկրական ծովի  
մուտքի մոտ:

Ավստրիայի դրավումը, վորը խախտեց իտալական դիրքերը  
կենտրոնական և Հարավ-արևելյան Յեվրոպայում, զարկ տվեց  
իսպանական ժողովրդի դեմ ուղղված իտալական ինտեր-  
վենցիայի ուժեղացմանը: Կորցնելով իր դիրքերը կենտրոնական

Յեկրոպայում, Մուսուլինին հասկանում է, վոր Իսպանիայում պարտութուն կրելն առաջ կրերի Փաշխտական ղեկաւորաւորաւ լիակատար խորտակում Իտալիայում:

### ԼԵՀԱՍՏԱՆԻ ՄԵԾԱՊԵՏԱԿԱՆ ԴԻՏԱՎՈՐՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ

Լեհ-լիտվական կոնֆլիկտը, վոր 1938 թ. մարտին պրոֆուկացիայի նպատակով սարքեց Լեհաստանը, պարզորոշ կերպով ցույց տվեց՝ Յեկրոպայում Փաշխտական ազրեսորներն ալբործակցի իմպերիալիստական պլանները: Միջադեպին հաջորդեց սվինով ամբաստանում ու լուրիմատումը, վոր պահանջում էր Չեխոսլովակիայի Լեհաստանի ու Լիտվայի միջև: Իրվանագիտական հարաբերութուններն ալբ յերկրներն միջև խզվել էյին դեկտ 1920 թվականին, այն բանից հետո, յերբ լեհական զենեւալ յեկրոպային զավթեց Վիլնոն—Լիտվական պետութան հին մայրաքաղաքը:

Լեհաստանի ներկայացրած ուլտիմատումը Լիտվային և սրտահեա «հարաբերութունները նորմալացնելու» պահանջը միայն պատրվակ էյին, վորպետղի լեհական բանակները Լիտվա ներխուժեն: Լիտվական կառավարութունը չենթարկվեց Բեռլինի ցուցումով կատարված պրոֆուկացիային և համաձայնեց նորմալ ղեկանագիտական հարաբերութուններ հաստատել Լեհաստանի հետ: Սակայն դրութունը լեհ-լիտվական սահմանի վրա շարունակում է մնալ լարված, և բոլոր հիմքերը կան նոր պրոֆուկացիաներ սպասելու Լեհաստանի կողմից, վորն արտաքին քաղաքականութունը ղեկավարում է հիտլերյան դործակալ՝ գնդապետ Բեկը:

Լեհաստանը Բեռլինի իր տերերի առաջադրանքով ձգտում է զավթել Լիտվան, այն հաշվով, վոր այնուհետև հերթի դնի Լատվիայի և Եստոնիայի հարցը: Այս պլանի իրագործման համար գնդապետ Բեկը փորձում է հրապուրել Մերձբալթյան պետութուններին զեպի «չեզոքութան» ուղին՝ Փաշխտաների կողմից պատրաստվող նոր զավթումների վերաբերմամբ:

Գնդապետ Բեկը, վոր լեհ-գերմանական «մերձեցումից» զեուևս շատ առաջ է գերմանական ռազմական հետախուզութան դործակալը դարձել, կատարում է Հիտլերի հանձնարարութունները կենտրոնական, Արևելյան և Հարավ-արևելյան Յեկրոպայում: Լեհաստանը ձգտում է կործանել կոլեկտիվ անվտանգու-

թյան սխտեմը, վորնչացնել Փորը Անտանտը և մեկուսացնել Չեխոսլովակիան, վորն այժմ Փրանսիայի միակ հենարանն է Հարավ-արևելյան Յեկրոպայում: Չեխոսլովակիայի մեկուսացումը, գերմանական Փաշխտաների մտքով, պետք է դուրացնի հարձակում գործելը նրա վրա, իսկ հետագայում՝ նաև Փրանսիայի վրա: Լեհաստանը, վորն իրեն մեջ է գցում Չեխոսլովակիայի դեմ ուղղվելիք արշավանքին մասնակցելու համար, հույս ունի, վոր իրեն ել բաժին կընկնի ալբարից: Արդեն այժմ իսկ բանակցութուններ են վարվում Չեխոսլովակիան՝ Գերմանիայի, Լեհաստանի ու Հունգարիայի միջև բաժանելու համար:

Անցյալում Լեհաստանը սերտ բարեկամական հարաբերութուններ էր պահպանում Փրանսիայի հետ: Չեխոսլովակիան նա զեու հիմա ել չի հրաժարվել Փրանսիայի հետ կնքած դաշինքից: Բայց իրոք Լեհաստանը բոլորովին հեռացել է իր գաշնակցից և ամբողջովին մտել է գերմանական Փաշխտի Փարվատերը: Կառավարող շրջանները միամտորեն հույս ունեն գերմանական Փաշխտի աջակցութունն ստանալ «մեծ Լեհաստան» ստեղծելու գործում, մի պետութուն, վորը տարածվելու յե «ծովից ծով» և իր մեջ է առնելու բացի Բալկանյան յերկրներից՝ նաև Չեխոսլովակիայի մի մասը, նմանապես և Խորհրդային Բեյրոտսիան և Ուկրաինան:

Իսկ իրականում Լեհաստանը Գերմանիային հարկավոր է վերջինիս զավթողական պլաններն իրագործելու համար, մասնավորապես նա հարկավոր է վորպես սլացողարմ՝ Խորհրդային Միության վրա հարձակվելու համար: Ներս թափանցելով լեհական տերիտորիա, գերմանական զորքերը հազիվ թե թողնեն այդ տերիտորիան: Իսկ խորհրդային սահմանների վրա կատարելիք Փաշխտական ազրեսորի հարձակումը նրան լիակատար ջախջախում է սպասնում: Այդպիսով, Լեհաստանն իրեն դատապարտում է լիակատար կործանման ու վորնչացման:

Լեհաստանը մտնում է գերմանական ազրեսորների ոքյեկաների թվի մեջ ու ամենեկն չի կարող հանդիստ լինել իր տերիտորիաների, առաջին հերթին վերին Սիլեզիայի և Պոմորյեյի վիճակի համար: Լեհաստանը վերջին տարիներս կորցրել է իր ազդեցութունն Ազատ Իանցիկ քաղաքում: Այդ քաղաքը, վոր Լեհաստանի համար կարևորագույն յեյք է հանդիսանում զեպի ծովը, փաստորեն գտնվում է գերմանական Փաշխտաների ձեռքին: Հիտլերը միանգամայն աներկիմաստ կերպով վերջերս հայտարարեց, վոր ինքը մտաղիք է լիկվիդացիայի յենթարկել Լեհա-



կան միջանցքը: Այդ հասկանալով, Կնդապետ Բեկն ուղղում է հիշյալ կորուստների դիմաց նախապես փոխհատուցում ձեռք բերել Լիտվայի հաշիվին, նմանապես և Լատվիայի ու Եստոնիայի հաշիվին: Սակայն, յեհական Փաշիգովին դեպի ազրեսիա մղելով, Հիտլերը բնավ մտադիր չէ Լեհաստանի սղտին հրաժարվելու: Մերձբալթյան յերկրների նկատմամբ ունեցած իր պլաններին:

## ՃԱՊՈՆԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՋԱԽՆ Ե ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՍ

Ճապոնիան պատերազմի վտանգի հիմնական ոջախն է Հեռավոր Արևելքում: Ճապոնական իմպերիալիզմը, վոր յերազում է իր զերիչխանությունը հաստատել Ասիայում, զինված ուժով փորձում է իրեն յենթարկել չինական մեծ ժողովրդին:

1931 թվականին Ճապոնական իմպերիալիզմն սկսեց այսպես կոչված «փոքր» պատերազմ, վորը սակայն մեծ խնդիրներ եր հետապնդում: Այդ պատերազմի վերջնական նպատակն եր հանդիսանում ամբողջ Չինաստանի կլանումը՝ նրա առանձին տերիտորիաները մեթոդիկ կերպով անջատելու միջոցով, ուրիշ խոսքով—Չինաստանը Ճապոնական իմպերիալիզմի գաղութ դարձնելը:

Իսկապես ասած, Ճապոնիայի ներխուժումը Չինաստան է չինական հողերի նվաճումն սկսվել է շատ ավելի առաջ—դեռևս անցյալ դարի վերջին տարիները: 1895 թվից սկսած մինչև համաշխարհային պատերազմի վերջնալը Ճապոնիան նվաճեց Ֆորմոզան, Կորեան, Պեակադորյան կղզիները և այլ տերիտորիաներ:

Միկադոյի (Ճապոնական կայսրի) անունով 1927 թվին ներկայացրած հուշագրի մեջ Ճապոնական իմպերիալիզմի գաղափարախոս վարչապետ Տանական դրում եր.—

«Համաձայն Մեյձիի պատգամի, մեր առաջին քայլը պետք է լինի Ֆորմոզայի նվաճումը, իսկ յերկրորդ քայլը—Կորեայի աննեքսիան: Այժմ պետք է անել յերրորդ քայլը, այն է՝ նվաճել Մանջուրիան, Մոնղոլիան և Չինաստանը: Յերբ այս կարվի, մեր վտորի տակ կլինի մնացած ամբողջ Ասիան, ներառյալ նաև Հարավային ծովի կղզիները»:

Ճապոնիան 1931 թվին գավթեց Չինաստանի հյուսիս-արևելյան յերեք նահանգները, վորոնք կրում էին Մանջուրիա անունը: Այնուհետև ստեղծվեց անկախ Մանջուր-Գո պետությունը, վորի զլուխ նշանակվեց Ճապոնական կամակատար Պուեի-Ին՝ հա-

լից ընկած չինական ղեկաստիայի շտաբիղներին մեկը: Մանջուր-Գոն ստացավ «մարիոնետային», ուրիշ խոսքով՝ տիկնիկային պետություն մականունը, վորովհետև բոլորի համար պարզ է, վոր այդ տերիտորիայում իսկական տեր հանդիսանում է Մանջուրիայի ճապոնական ոկուպացիոն բանակի կլանատույնյան շտաբը—ճապոնական իմպերիալիզմի առավել ազրեսիվ և ռեակցիոն ուժերի մարմնավորումը: 1937 թվից առաջ յեղած ժամանակաշրջանում Ճապոնիան տիրեց Չախարի և Ժեխեյի նահանգների զգալի մասին և ուժեղացրեց ճնշումը Հյուսիսային Չինաստանի մյուս շրջանները վրա:

Ճապոնական իմպերիալիզմի գավթողական պլանները և չինական ժողովրդին իրեն յենթարկելու նրա ձգտումները հակաճապոնական տրամադրությունների չտեսնված աճում առաջ բերին Չինաստանում: 1931 թվից մինչև 1937 թվի ժամանակաշրջանը հավերժացավ չինական ժողովրդական մասսաների շարժման հզոր վերելքով՝ Ճապոնիայի հանդեպ անձնատուր լինելու դեմ: Յերկրի բոլոր ներքին ուժերը համախմբվեցին հակաճապոնական ազգային միասնական ճակատում և հակահարված կարմակերպեցին ընդդեմ ոտարերկրյա գավթիչների:

Ճապոնական ղեկավորականությունը, վոր առաջին անգամը հակահարվածի հանդիպեց չինական մասսաների կողմից, դրանից հետո ել չհրաժարվեց հետագա ազրեսիայից: Չափն անցկացրած ճապոնական գավթիչները Չինաստանի դեմ դուրս բերին զգալի քանակությամբ զինված ուժեր և շարունակում են ձգտել ճապոնական գաղութ դարձնելու նրան:

Ճապոնական իմպերիալիզմի պլանները չեն սահմանափակվում Չինաստանում գավթումներ կատարելով: Ճապոնիան իր հետագա խնդիրն է համարում նվաճել Փրանսական Հնդկաչինը, Ֆիլիպինյան կղզիները, Հնդկաստանը, Հոնկոնգը, Ինդոնեզիան և Մինդաղուրը, վորն Անդիայի հենարանն է հանդիսանում Հընդկական և Խաղաղ ովկիանոսների հանդիպակետում: Անդրիական դոմինիոն Ալստրալիան նույնպես սպառնալիքի տակ է դտնվում:

Խաղճա-Փաշխատական կլիկը պատերազմ է պատրաստում նաև Խորհրդային Միության դեմ: Տանակայի արդեն վերևում բերված հուշագրի մեջ ընդդժվել եր՝ Ուրալի լեռնաշղթայից դեպի արևելք ընկած բոլոր խորհրդային հողերը դրավելու մտադրությունը: Այս ավաղակային դիտավորությունները քաղկացուցիչ մասն են ճապոնական իմպերիալիզմի կողմից ամբողջ Ասիան գավթելու այն ծրագրի, վորը քողարկվում է՝ ժողովրդ-

դական մասսաներին խարելու հույսով չըջանառության մեջ դըր-  
ված «Ասիան ասիացիներին համար» կեղծավոր լողունդով:

ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստվելով, ձապոնիան սի-  
անմատիկաբար գինված ընդհարումների պրովոկացիա յե սար-  
քում խորհրդային-մանջուրական սահմանի վրա: Ձապոնական  
կառավարութունը խախտում է միջազգային իրավունքի նորմա-  
ները, հալածանքների յե յենթարկում ձապոնական նախահան-  
գիսաներն ալյցելող խորհրդային առևտրական նավերի անձնա-  
կազմերին և ուղևորներին, կասեցնում է՝ պատահամբ, մառա-  
խուզի պատճառով, սահմանն անցած խորհրդային փոստատար  
օդանավի հանձնումը և անամոթաբար խախտում է վճարման  
այն պարտավորութունները, վոր ձապոնիան հանձն է առել  
Չին-Արևելյան յերկաթուղու վաճառման մասին կայացած համա-  
ձայնությամբ:

Ձապոնիան առայժմ սիրտ չի անում ԽՍՀՄ վրա հարձակ-  
վելու, մանավանդ վոր նրա սարքած սահմանային միջադեպերի  
պրովոկացիան, վորոնց նպատակն է շոշափել մեր պաշտպանու-  
թյան ամրությունը և ոտարեղիքյա գավթիչներին դեմ խորհրդա-  
յին հողը պաշտպանելու մեր վճռականությունը,—միշտ ու շա-  
րունակ հանդիպում է մեր խորհրդային քաջարի սահմանապահ-  
ների շանթաբայց և դաժան հակահարվածին: Ուստի չհանդգնե-  
լով պատերազմ սկսել, թեպետև չհրաժարվելով Խորհրդային Մի-  
ության վերաբերմամբ ունեցած իրեն ազրեսիվ դիտավորու-  
թյուններին, ձապոնիան գերադատում է միտոմամանակ գոր-  
ծել այլ ուղղություններով:

Ձապոնիայի գեղատիչ հայացքն ուղղված է նմանապես և  
Խորհրդային Միության բարեկամ Մոնղոլական Ժողովրդական  
Հանրապետության վրա:

Իայց ձապոնական գավթիչները չարաչար կսխալվեն իրենց  
պլաններում ինչպես ԽՍՀՄ վերաբերմամբ, նույնպես էլ ՄԺՀ  
վերաբերմամբ: ԽՍՀՄ ի վիճակի յե ապահովելու հեռավոր-  
արեւելյան սահմանների պաշտպանությունը նրանց ամբողջ յեր-  
կայնությամբ: Սակայն Խորհրդային Միությունն այս հարցում  
գեկավարվում է վո՛չ միայն սեփական անվտանգության շահե-  
րով, այլև դեպի մոնղոլական աշխատավոր ժողովուրդը տածած  
բարեկամությամբ և մի ձգտումով, այն է՝ թույլ չտալ, վոր ձա-  
պոնական իմպերիալիզմի՝ ընդհանուր խաղաղությանն սպառնա-  
ցող գավթողական գործունեյության վորոտը նոր ծավալ ստա-  
նա: Հենց այդ պատճառով 1936 թ. մարտի 12-ին ԽՍՀՄ ու

ՄԺՀ միջև կնքվեց փոխադարձ ոգնության վերաբերյալ հա-  
մաձայնություն ազրեսորի դեմ: Ընկեր Ստալինը, դեռևս հիշյալ  
պայժամագիրը կնքելուց առաջ, Ռոյ Հոուարդի հետ ունեցած  
գրույցի ժամանակ նչեց:

«Այն դեպքում, յեթե ձապոնիան սիրտ անի հարձակվե-  
լու Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության վրա,  
սպառնալով նրա անկախությանը, մենք հարկադրված  
կլինենք ոգնելու Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապե-  
տությանը... Մենք Մոնղոլիայի Ժողովրդական Հանրա-  
պետությանը կոգնենք այնպես, ինչպես ոգնեցինք նրան  
1921 թվականին»<sup>1</sup>:

Ընկեր Ստալինի հայտարարությունը, վորը խանդավառու-  
թյամբ ընդունվեց Մոնղոլական Ժողովրդական Հանրապետու-  
թյան մեջ և դրական արձագանգ առաջ բերեց խաղաղության  
պահպանման գործում շահազրդոված բոլոր յերկրներում, հնչեց  
վորպես անեղ մի նախազուշացում ձապոնիայի համար և, ան-  
տարակույս, հեռացրեց ձապոնական իմպերիալիզմի կողմից  
Մոնղոլական պետության վրա կատարվելիք հարձակումը: Իայց  
ձապոնական ռազմամոնքներն ամենեին էլ ընդմիշտ չեն հրաժար-  
վել այդ ուղղությամբ կատարելիք ազրեսիայից: Պրովոկացիայի  
նպատակով ձապոնացիների կողմից ՄԺՀ և Մանջու-Քոյի  
սահմանում սարքվող սահմանային ընդհարումները վորոշ մս-  
մենտում պեաք է առիթ ծառայեն ազրեսիայի համար:

Հիմնական գծերով սրանք են այն գլխավոր ավազակների  
գլխավորությունները, վորոնք գործում են միջազգային մեծ  
ձանապարհի վրա,—Գերմանիայի, Իտալիայի և ձապոնիայի,  
նմանապես և Լեհաստանի գլխավորությունները, վորը մանր,  
բայց բնավ վոչ պակաս գեղատիչ ազրեսոր է:

**ԱԳՐԵՍԻԱՅԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՍԸ—ՆԵՐՔԻՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ  
ԴՈՒՐՍ ԳԱՆՈՒ ՎՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԵՆ**

Պաղաղասեր տերությունների բանակին պատկանող կապի-  
տալիստական պետությունները շատ ավելի խոշոր տնտեսական,  
Ֆինանտական ու ռազմական ռեսուրսներ ունեն, քան ազրեսորե-  
րի բրկի մեջ մտնող, կամ սրան հարող պետությունները: Հառ-

1 Ընկեր Ստալինի գրույցը ամերիկյան «Սկրիպտ» Հոուարդ Նյույդիլերս»  
լրագրային միավորման նախագահ պարոն Ռոյ Հոուարդի հետ, էլ  
5—8, Հայկուսհրատ, 1936 թ.:

19-48/09



կապես այդ հանգամանքը և Ազգերի լիգայի կանոնադրութեան մեջ յեղած այն հոդվածը, վոր նախատեսում է ազրեսորի դեմ սանկցիայի կիրառում, հնարավորութեամբ և ընձեռում խաղաղութեան պահպանման գործում շահագրգռված պետութեաններին հակահարված տալու պատերազմի Փաշխտական հրճիչներին, հնարավորութեամբ և տալիս վճռական դիմադրութեան ցույց տալ Փաշխտական ազրեսիային: Այդ դեպքում Արևմուտքի դեմոկրատական պետութեանները կարող կլինեյին հույս դնել հզոր Սորհրդային Միութեան անկախութեան վրա, վորն ընդհանուր խաղաղութեան պատվարն է հանդիսանում:

Փաշխտական ազրեսորները հաշվի յեն առնում այդ հնարավորութեանը: Ահա թե ինչու նրանք կատարի ջանքեր են գործադրում, վորպեսզի վոչնչացնեն կոլեկտիվ անվտանգութեան սխտեմը, քայքայեն Ազգերի լիգան և համենայն դեպս նրան անվտանգ դարձնեն ազրեսորների համար: Նրանք ձգտում են նաև քայքայել Փոքր Անտանտը, վորն անցյալում նպաստել է յեվրոպական խաղաղութեան պահպանմանը, նրանք ձգտում են վիժեցնել Սորհրդային-Ֆրանսական և Սորհրդային-Չեխոսլովակյան պակտերը փոխադարձ ոգնութեան մասին ընդգեմ ազրեսիայի, պակտեր, վորոնց կնքումն իր ժամանակ խաղաղութեան բարեկամների լուրջ հաղթանակը հանդիսացավ: Այս ամենը վկայում է այն մասին, վոր ազրեսորների բրոկին պատկանող յերկրներն իրենց լիակատար հաշիվ են տալիս խաղաղութեան պահպանման գործում շահագրգռված պետութեանների պոտենցիալ ուժերի և հնարավորութեանների նկատմամբ:

Կոլեկտիվ անվտանգութեան սկզբունքներին հավատարիմ մնալը և դեմոկրատական յերկրների իսկական համագործակցութեանն ազրեսորին սանձահարելու միակ միջոցն են հանդիսանում: Այդ հասկանալով, Փաշխտական ավազակները փորձում են խաղաղութեան անբաժանելիութեան սկզբունքին հակադրել «մեկուսացված պատերազմի» թեորիան, վորի նպատակն է՝ ազրեսորների համար հնարավորութեամբ ստեղծել առանձին-առանձին հաշիվ մաքրելու իրենց զոհերի հետ:

Փաշխտական ազրեսորները փորձում են ավանտյուրիստական արտաքին քաղաքականութեան ուղիներում յեւր գտնել ներքին լուրջ դժվարութեաններին:

Այդ դժվարութեանների թվին է պատկանում առաջին հերթին՝ Փաշխտական պետութեանների տնտեսական և Ֆինանսական

դրութեան խիստ վատթարացումը: Աճում է Գերմանիայի, Իտալիայի, Լեհաստանի և Ճապոնիայի ժողովրդական մասսաների դժգոհութեանը, վորոնց Փաշխտական հասցրել է քայքայման և անբաստութեան վերջին աստիճանին: Փակուզու մեջ ընկած Փաշխտական ազրեսորները հույս ունեն, թե նոր իմպերիալիստական սպանդը նրանց հնարավորութեամբ կտա ստեղծված դրութեանին յեւր գտնելու:

Ընկեր Ստալինը Համկ(բ)Կ XVII համագումարին տված պատմական զեկուցման մեջ ցույց տվեց նման հաշիվների ցնորականութեանը:

«Իհարկե, հիմք չկա յենթադրելու, թե պատերազմը կարող է իրական յեւր տալ: Ընդհակառակը, նա պետք է եւլ ավելի խճճի դրութեանը: Ավելին. նա անշուշտ կարձակի հեղափոխութեան ձեռքերը և հարցականի տակ կգնի կապիտալիզմի գոյութեանն իսկ մի շարք յերկրներում, ինչպես այդ տեղի ունեցավ առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում: Յեւլ յեթե, չնայած առաջին իմպերիալիստական պատերազմի փորձին, բուրժուական քաղաքագետներն այնուամենայնիվ պատերազմից են կառչում, — ինչպես խեղդվողը ծղոտից, ապա այդ նշանակում է, վոր նրանք վերջնականապես խճճվել են, փակուղի յեն ընկել և պատրաստ են գլխապատառ անդունդ նետվելու»<sup>1</sup>:

## ԱԳՐԵՍՈՐՆԵՐԻ ԲԼՈՎԻ ՆԵՐՔԻՆ ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ

Բախական է մի թուուցիկ հայացք գցենք այն տվյալների վրա, վորոնք բնորոշում են ամենից ավելի ազրեսոր պետութեանների ներքին դրութեանը, վորպեսզի համոզվենք նրանց եկոնոմիկայի ու ֆինանսների արտասովոր լարվածութեան մասին: Ազրեսիվ բրոկի մասնակիցներից վոչ մեկը չունի այն միջոցներն ու ռեսուրսները, վոր անհրաժեշտ են մեծ ու յերկարատե պատերազմ մղելու համար՝ աշխարհի նոր վերաբաժանում կատարելու նպատակով: Փաշխտական ազրեսորների թիկունքը չափազանց անկայուն է և անհուսալի:

## ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիայում վերջին տարիների ընթացքում վճռականապես ամեն ինչ յենթարկված է վիթխարի սպառազինումների քա-

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 637, Հայկուսհրատ, 1937 թ.:

դաքահանութեանը: Գերմանական բյուջեյի ծախսի մասը 1933-34 թվին կազմում էր 9,7 միլիարդ մարկ, իսկ 1937-38 թ. նա աճելով հասավ 25 միլիարդ մարկի: Այս դուժարները ճնշող մասը ծախսվում է ցամաքային, ծովային և ողային սպառազինումների վրա:

Սպառազինումները և պատերազմի պատրաստութունը Ֆրանսիայում միջոցները վերցվում են՝ ներքին փոխառութունները հարկադիր կերպով զետեղելու, հարկերը բարձրացնելու և հանդանակութուններ կատարելու ու առաջին հերթին աշխատավորների յեկամուսները կրճատելու հաշվին:

Գերմանիայի պետական պարտքը, վորը 1933 թվին կազմում էր 9,5 միլիարդ մարկ, 1938 թվին հասավ 38 միլիարդ մարկի, այսինքն, չորս անգամ ավելացավ: Հարկային ապարատի ճնշումը ծայր սատիճանի յե հասցված: Հարկումները 1933 թ. սկզբի հետ համեմատած ավելացել են 80 տոկոսով: Պետք է մատնանշել, վոր աշխատանքային յեկամուսների վրա դրված ուղղակի հարկերն այդ ժամանակամիջոցում աճել են 221,5%-ով, իսկ սպառողական ապրանքների վրա դրված անուղղակի հարկերը— 159,4%-ով: Այդպիսով, հարկումների ուժեղացումն անդրադասնում է ամենից առաջ աշխատավոր մասսաների կյանքի մակարդակի վրա, այն մասսաների, վորոնց շահագործումն առանց այն ել հասցված է ծայրահեղ աստիճանի:

Գերմանական բանվորի աշխատավարձը Հիտլերի՝ իշխանութեան գլուխ անցնելու որից մինչև այժմ իջել է վոր պակաս քան 30%-ով: Նույն այդ ժամանակամիջոցում բանվորական որվա տեղութունն ավելացել է 16%-ով, իսկ առաջին անհրաժեշտութեան ստարկաների գներն աճել են 24,2%-ով: Մինչև իսկ պաշտոնական Փաշիստական վիճակագրութունն ել, վոր հրապարակվել է աշխատանքի միևիստրութեան կողմից, մատնանշում է, վոր աշխատանքի բարձր ինտենսիվութեան և կիսաքաղցածութեան հետևանքով սպառնալից չափերով աճում է հիվանդութունների թիվը Գերմանիայի աշխատավոր մասսաների մեջ:

Գյուղացիութեան դրութեան նկատմամբ բնորոշ է, վոր հարկերը չվճարելու կամ այլ «հանցանքների» պատճառով դյուղացիական անտեսութուններն աճուրդով վաճառելու դեպքերի թիվը 1933 թ. սկզբից մինչև 1936 թվականն աճել է 70%-ով:

Վորովհետև Գերմանիայի սեփական հումքային և պարենային ուսուրանքը սահմանափակ են, այդ պատճառով նա ստիպված է դիմելու ներմուծման: Սակայն Գյուրինգի կողմից

չրջանառութեան մեջ դրված «մսի փոխարեն թնդանոթներ» յուզուեղի իրադրութեան կարգով գերմանական Փաշիզմը ներմուծում է միայն այն ապրանքները, վորոնք անհրաժեշտ են պատերազմի պատրաստութեան համար: Մնդումթերքների ներմուծումը խիստ կերպով կրճատում է տարեցտարի: Գերմանիայում Փաշիստական տերուստրիսութեան ժամանակամիջոցում հացահատիկային կուլտուրաների արտադրանքը վոր միայն չի ավելացել, այլ մինչև իսկ ուժեղ չափով ընկել է: Բավական է հիշատակել այն, վոր «Գերմանական կայսրութեան վիճակագրական տարեգրի» տվյալներով ցորենի բերքը 1932 թվին յեղել է 5 միլիոն տոնն, իսկ 1937 թ. նվազել իջել է 4390 հազար տոննի: Կարեկանի բերքը 1932 թ. յեղել է 8360 հազար տոնն, իսկ 1937 թ. նվազել իջել է 6760 հազար տոննի: Յեթե 1932 թվի հացահատիկային կուլտուրաների բերքը մենք, համեմատենք 1937 թվի բերքի հետ, ապա կտեսնենք, վոր նա նվազել է համարյա 3 միլիոն տոննով:

Գերմանական բնակչութեան սարսափելի աղքատացման հետ զուգընթաց աճում են թնդանոթային արքաների շահույթները, վորոնք հարստանում են սագմական մատակարարումների շնորհիվ: Կրուպպի կոնցերնը միմիայն 1937 թվականին ստացավ 27 միլիոն մարկ զուտ շահույթ:

Գերմանական Փաշիզմի պատերազմի տենդալին պատրաստութունը կատարվում է ի հաշիվ Գերմանիայի ժողովրդական մասսաների: Աշխատավորների կյանքի պայմանների անընդհատ վատթարացումը դժգոհութեան աճում է առաջ բերում: Ավելի ու ավելի հաճախակի յեն հնչում բողոքի ձայներ յերկրի ներսում տիրող քաղցի ու տեղորի դեմ, Իսպանիայում կատարվող ինտերվենցիայի դեմ: Գերմանական բանվոր դասակարգն ուժեղացնում է պայքարը Փաշիստական դիկտատուրայի դեմ, դրա համար ոչտաղործելով բոլոր լեզալ հնարավորութունները ու առաջին հերթին «Աշխատանքային ճակատը» և «Ուժը բերկրանքի մեջ է» կազմակերպութունը:

## ԻՏԱԼԻԱ

Բավականաչափ հումքային սեսուրաների պակասութունը միշտ իտալական իմպերիալիզմի աքիլիսյան զարչադարն է յեղել: Իտալիայի համար նավթամթերքների պահանջմունքը կազմում է տարեկան 3,5 միլիոն տոնն, իսկ սեփական հանույթը 16 հազար տոննի ել չի հասնում: Իտալիայի հա-

մար անխի պահանջմունքը 12 միլիոն տոննից անցնում է, իսկ սեփական հանույթը 1 միլիոն տոննի էլ չի հասնում: Իտալիայի համար յերկաթի հանքի, յերկաթի ջարդի (ՊՕՄ) պահանջմունքը կազմում է մոտավորապես 2 միլիոն տոնն, իսկ ներքին հանույթը հասնում է միայն 600 հազար տոննի: Վատ է դործը նաև գունավոր մետաղների տեսակետից—պղնձի արտադրությունը Իտալիայում՝ միայն 1%—ով է բավարարում յերկրի պահանջմունքն այդ մետաղի վերաբերմամբ: Բոլորովին բացակայում է կաուչուկը, վորը չափազանց անհրաժեշտ է ավտոմոբիլային ու քիմիական արդյունաբերությունից: զգացվում է անտառանյութի և արդյունաբերական հումքի բազմաթիվ այլ տեսակների պակասությունը:

Իտալիական գյուղատնտեսությունն իր չափազանց հետամնացության պատճառով ի վիճակի չէ յերկիրը պարենով ապահովելու: Բավական է նշել, վոր ցորենի պահանջմունքը 80 միլիոն կլիկտայից անցնում է: Իսկ ներքին արտադրանքը միջին հաշվով 65 միլիոն կլիկտայի էլ չի հասնում: Անասնաբուծությունը բոլորովին ընկել է Ֆաշիստական տիրապետության տարիներում:

Հումքի և պարենի պակասության պատճառով Իտալիան հարկադրված է ուժեղացնել աննդամթերքի ներմուծումն, արտասահմանից, իսկ այդ պահանջում է խոշոր չափով վոսկի և ոտաբերկրյա վալյուտա ծախսել: Մինչդեռ իտալիական պետական դանձարանը բոլորովին հյուժվել է հարեչական ավանտյուրայի հետևանքով, վորը մինչև այժմ շարունակում է հակայական միջոցներ կրանել: Իսպանիայում կատարվող ինտերվենցիան նույնպես մեծ պահանջներ է առաջադրում իտալական Ֆաշիստներին, վորովհետև, ինչպես հայտնի յե, Ֆրանկոն, բացի պարաբերից, վոչինչ չունի:

Իտալիական Ֆաշիստները դիմում են ինֆլացիայի, պետական վոխառությունների հարկադիր դետեղման, ուժեղացրած հարկումների: Բայց յերկրի ֆինանսական և տնտեսական դրությունն որ—ավուր վատթարանում է, սպառնալով լիակատար անանկությունը պերջանալ:

Իտալիայի բանվոր դասակարգի անտեսական դրությունը վերջին տարիներս բոլորովին անտանելի յե դարձել: Ռեալ աշխատավարձը 1935 թ. ընթացքում իջեցված է միջին հաշվով 42% ու: Գործազրկությունն աճում է: Չնայած վոր ուղղակի արդյունաբերությունն աշխատում է լիակատար բեռնվածությամբ, գործազուրկների թիվն այժմ հասնում է 1 միլիոնի: Ըն-

տանիքի անդամների հետ միասին հաշված՝ վոչ պակաս քան 4,5 միլիոն է կազմում այն գործազուրկների թիվը, վորոնք նպաստ չեն ստանում և, այդպիսով, զրկված են գոյություն վորևէ միջոցից, իսկ մեծ մասամբ նաև պատուարանից:

Իրանից լավ չէ նաև գյուղացիության դրությունը: Գյուղատնտեսական բանվորները և բառախններն ավելի ևս անդուժաճազործման են յենթարկվում, քան արդյունաբերական բանվորները: Մանր հողատերերի դրության մասին բավական պերճախոս վկայում է այն հանգամանքը, վոր խիստ կերպով ավելացել է հարկերի և այլ տուրքերի չվճարման պատճառով հողամասերը հարկադրաբար եքսպրոպրիացիայի յենթարկելու դեպքերի թիվը:

Ճաշխոտական տիրապետությունն Իտալիայում առաջ է բերել վոչ միայն բանվոր դասակարգի և գյուղացիության աղքատացում, այլև ինտելիգենցիայի, արհեստավորների, մանր ու միջակ բուրժուազիայի քայքայում: Այդ հանգամանքը պայմանավորում է հեղափոխական տրամադրությունների աճումը յերկրում: Ճաշխոտական արհմիությունները և ազատ ժամանակի («ընդդրամբո») կազմակերպությունները ավելի ու ավելի լայն կերպով են ուղտազործվում կոմկուսի կողմից՝ վորպես լեզալ բազա կազմակերպելու բանվոր դասակարգին և գյուղացիությանը՝ Ֆաշիստական դիկտատուրայի դեմ պայքարելու համար: Ժողովրդական մասսաները, չնայած կատաղի տեռորին, ավելի ու ավելի վճռականորեն են անցնում ակտիվ դիմադրություն ընդդեմ կառավարական ձեռնարկումների: Մի շարք ուղղակի գործարաններում՝ Միլանում, Տուրինում և ուրիշ քաղաքներում բանվորները դիմում են սաբոտաժի, չցանկանալով սպառազինություն արտադրել, վորը նշանակված է իսպանական ժողովրդի կատարվող ադրեսիայի համար: ձենովայում, Չիվիտա-Վեկիում, Նեապոլում և մյուս նավահանգիստներում ավելի ու ավելի հաճախակի բնույթ են ստանում այն դեպքերը, յերբ բանվորները հրաժարվում են ուղղակի յարկերից և իսպանիա գեներալ Ֆրանկոյին և վերին, վորոնք ուղարկվում են իսպանիա գեներալ Ֆրանկոյին և իտալո-գերմանական ինտերվենտներին: շատ դեպքերում Ֆաշիստական իշխանություններն ստիպված են լինում ուղղակի յարկերից կատարել զորամասերի ուժերով:

Իսպանական ժողովրդի դեմ ուղղված իտալական ինտելիգենցիայի պատճառով առաջացած վրդովմունքի չնորհիվ ավելի ևս հեղափոխականանում են մասսաները, վորոնք ավելի ու ու-

վելի համոզվում են, վոր ֆաշիզմի ավանտյուրերիստական քաղաքականութիւնը կործանարար է:

Իտալիայի կոմունիստական կուսակցութիւնը, վորը լըոր ընդհատակն է քշված, գլխավորում է միասնական և ժողովրդական ճակատ ստեղծելու համար մղվող պայքարը:

## ԼԵՀԱՍՏԱՆ

Չնայած վոր Լեհաստանը հումքով մի քիչ ավելի լավ է ապահովված, քան Գերմանիան և Իտալիան, բայց նրա արդյունաբերութիւնը չափազանց թույլ է զարգացած: Այդ բացատրվում է ամենից առաջ նրանով, վոր լեհական ժողովրդի գնողունակութիւնը չափազանց ցածր է և Լեհաստանը հնարավորութիւն չունի արտաքին շուկայում մրցակցելու մյուս յերկրների հետ: Լեհական արդյունաբերութիւն ճյուղերի մեծամասնութիւն արտադրանքը 1928 թ. մակարդակից ցածր է:

Լեհաստանի ֆինանսական դրութիւնը ընտրոշելու համար բաւական է նշել, վոր, լեհական պաշտոնական տվյալներով, պետութիւնն պարտքը ըստ ներքին փոխառութիւնների՝ կազմում էր 1937 թ. հոկտեմբերի 1-ին 2,1 միլիարդ գլոտիխ (միլիարդ մեկ տարվա ընթացքում այդ պարտքն աճեց 400 միլիոն գլոտիխով): Վորպես փոխառութիւններ ԱՄՆ-ից, Անգլիայից և Ֆրանսիայից ստացած՝ Լեհաստանի պարտքն այդ ժամանակ կազմում էր 1,7 միլիարդ գլոտիխ: Պետք է նկատի ունենալ, վոր արտաքին փոխառութիւնները Լեհաստանն ստիպված է վոսկով վճարել: Վորը լեհական գանձարանի սեյֆերում արդեն գրեթէ չկա:

Լեհական ֆինանսների վողրալի վիճակն անդրադարձել է նաև ժողովրդական տնտեսութիւն մի շարք ճյուղերի վրա, մասնավորապես տրանսպորտի վրա: «Կուրյեր Պորաննի»-ն յերկաթուղային տրանսպորտի վիճակին վերաբերող հոդվածում նշել է, վոր Լեհաստանի շոգեքարչերի պարկի մոտավորապես 70%-ը «հիշում է դեռևս 1904 թ. ուսու-ճապոնական պատերազմի ժամանակները»:

Լեհաստանի աշխատավորների դրութիւնը շարունակ վատթարանում է: Ուժեղանում է շահագործումը: Պաշտոնական տվյալներով, վոր հրապարակվել են լեհական սենատոր Ալքսանդրի կողմից, լեհական բանվորների մոտավորապես 80%-ը վառտակում է ամսական 100 գլոտիխից զգալիորեն պակաս, մինչդեռ ապրուստի մինիմումը ամսական 160 գլոտիխից անցնում է: Կա-

նայք և յերեխաները չափահաս բանվորների աշխատավարձի 50%-ն էլ չեն ստանում: Գործազուրկների թիւը լեհական քաղաքներում միայն կազմում է մոտ 2,5 միլիոն: Գործազուրկները գրկված են մինչև անգամ մուրացկանային նպաստից:

Լեհական արհեստավորների դրութիւն մասին, վորոնք լեհական բնակչութիւնի զգալի խալին են ներկայացնում, «Պոլսկա Զբրոյնա» թերթը գրել էր. «Իժվար է մինչև իսկ մոտավորապես վորոշել նրանց վաստակը, վորովհետև չնայած ընտանիքի բոլոր անդամներն աշխատում են որակյան 10 ժամ, այնուամենայնիւ այդ մարդիկ մահանում են քաղցից»:

Լեհաստանի գյուղատնտեսութիւնը չափազանց ցածր մակարդակի վրա յե գտնվում: Հողի կեսը պատկանում է խոշոր կալվածատերերին և միայն կեսը—գյուղացիներին: Գյուղացիութիւն մեծ մասը կովազուրկ է և ձիազուրկ: Գյուղացիութիւնի դժգոհութիւնն ավելի ու ավելի սուր ձևեր է ընդունում: Աճում է «Ստրոնիցալո Լյուդովե» ոպողիցիոն կուսակցութիւնն ազդեցութիւնը: 1937 թվականին բռնկեց գյուղացիական գործադուլը, վորին մասնակցում էր լեհական տաս նահանգների բնակչութիւնի 72%-ը: Յերկիրը չի կարողանում ազատվել անբերրի տարիների չրջանից: Լեհաստանի գյուղական բնակչութիւնը քայքայված է, խճճված է կուլակային-կալվածատիրական ստրկութիւնն ցանցում և դատապարտված է քաղցած դրութիւնն:

Փաշխտական տեուրի ուժեղացումը և ազգային փոքրամասնութիւնների հալածանքները յերկրում ստեղծել են բացառիկ լարված դրութիւն: Կառավարող շրջանները չափազանց անվերտահ են դուր իրենց: Ոպողիցիոն տրամադրութիւնները համակում են լեհական հասարակութիւնն մինչև իսկ այն շրջաններին, վորոնք առաջ պիլսուցկիականների ազդեցութիւնն տակ էլին գտնվում: Այս պայմաններում լեհական Փաշխտների արտաքին ավանտյուրաները կարող են չափազանց ահալոր հետեւանքներ ունենալ:

## ՃԱՊՈՆԻԱ

Ճապոնական իմպերիալիզմն արդյունաբերական հումքի հիմնական տեսակների նկատմամբ լուրջ կախում ունի ոտարերկրյա ներմուծումից: Ճապոնիան իր ներքին ուսուրոնների հալվին բավարարում է նավթամթերքների պահանջմունքի միայն 7,4%-ը, յերկաթի հանքի պահանջմունքի՝ 24%-ը, արճիճի պահանջմունքի՝

7,9%-ը, բամբակի պահանջմունքի՝ 2%-ը և այլն: Ճապոնիայի կախումն արտասահմանից՝ աճում և ստրտեղիական հումք ներմուծելու հետ զուգընթաց, վորն անհրաժեշտ և սպառական արդյունաբերության և պատերազմ մղելու համար: Իսկ հումքի և սպառանքության համար պետք և վճարել վոսիով և վալյուտայով: Չինաստանում մղվող պատերազմը մեծ վնաս հասցրեց ճապոնական արտաքին առևտրին:

Ճապոնական Ֆինանսները ծայր աստիճան լարված են:

Ճապոնիան փորձում և բարելավել իր ֆինանսական դրությունը պետական ներքին փոխառություններ գետեղելու միջոցով: Չնայած ճապոնական դանձարանի պարտքի ընդհանուր գումարը 1938/39 թ. կազմում և 20 միլիարդ իեն, նախատեսվում և պարտատոմսեր գետեղել ևս 5 միլիարդ իենի: Այս միջոցները, սակայն, ամենևին էլ բավական չեն, մանավանդ, վոր չինական ժողովրդի դեմ մղվող պատերազմը շարունակում և հսկայական միջոցներ կլանել: Հարցին լուծում չի տալիս հարկերի խիստ բարձրացումը: 1938 թվականին ուղղակի հարկերը 1937 թվի համեմատությամբ աճել են 120%-ով, իսկ անուղղակի հարկերը նույն ժամանակամիջոցում աճել են 30%-ով: Չնայած այդ խիստ միջոցներին, յերկրի ֆինանսական դրությունը շարունակում և սխտեմաստիկարար վատթարանալ:

Պատերազմն առաջին հերթին անդրադարձավ Ճապոնիայի բանվոր դասակարգի դրության վրա: Շահագործումը հրեշավոր չափեր և ընդունել: Բանվորական սրվա սեռողությունն որենքով սահմանված և 12 ժամ, իսկ իրականում նա 14-ից անցնում և, հասնելով յերբեմն նույնիսկ 17 ժամի: Բանվորներն աղքատիկ աշխատավարձ ստանալով հանգերձ, զրկված են իրենց անտեսական շահերը պաշտպանելու իրավունքից: Չինաստանում մղվող պատերազմի սկզբից արդելված են գործադուլները: Այնուամենայնիվ, չնայած դաժան հարձանքներին, հենց ճապոնական պաշտոնական տվյալներով, 1937 թվի 10 ամիսներին ընթացքում ճապոնական արդյունաբերության մեջ գրանցված և 1956 գործադուլ, վորոնց մասնակցել են 206 հազար բանվոր: Աճում և նաև ճապոնական գյուղացիների ղժգոհությունը: Հենց նույն այդ ժամանակաշրջանում գյուղում տեղի յեն ունեցել 3847 աշխատանքային կոնֆլիկտներ: Կարելի յե, հարկավ, չկասկածել այն բանում, վոր ճապոնական պաշտոնական իիճակադրությունը խիստ նվազեցրել և այս թվերը:

Բնակչության ավելի ու ավելի լայն մասսաներ են սկսում

ղժգոհությունը ցուցաբերել տերիտորյալ զավթումների և արտաքին ավանտյուրանների քաղաքականության վերաբերմամբ, մի քաղաքականություն, վոր սպառնալիքները իրագործում են ֆինանսական կապիտալի ոգտին՝ ի հաշիվ պատերազմի բոլոր դրություններն իր վզին կրող աշխատավորների: Յերկրում աճում են հակապատերազմական տրամադրությունները: Միօրինակ Տոկիոյում 1938 թ. փետրվարին ձերբակալվել են 4500 «անբարեհույս» անձեր՝ ակնավոր հասարակական գործիչներ, հրապարակախոսներ, ղեկավարներ, գրողներ և ղիտնականներ: Այդպիսի ձերբակալություններ կատարվել են նաև մի շարք այլ քաղաքներում, մասնավորապես Ոսակայում, Կիոտոյում և Ռիայամայում:

\* \* \*

Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի անտեսական դրության վերլուծությունը ցույց և տալիս ազրեսորների բլոկի ներքին թուլությունը, նրանց թիկունքի չափազանց անկայունությունը: Ազրեսորն ամենևին էլ այնպես ուժեղ չե, ինչպես փորձում և պատկերել ինքը բուրժուական-դեմոկրատական յերկրների այն շրջանները, վորոնք հետևում են համաձայնության գալու և Փաշխտական զավթիչներին զիջումներ անելու քաղաքականությանը:

Փաշխտական ազրեսիայի ուժեղացումը մեծ չափով բացատրվում և նրանով, վոր Արևմուտքի բուրժուական-դեմոկրատական պետությունները, վորոնք իրենց դասում են խաղաղասեր յերկրների շարքը և խոսքով հայտարարում են իրենց նվիրվածությունն Ազգերի լիգային, — գործով այդ քաղաքականությունը չեն կիրառում:

Բուրժուական-դեմոկրատական պետությունների վճռական զիբըր և իսկական հավատարմությունը կոյեկտիվ անվտանգության սկզբունքներին՝ խաղաղության անբաժանելիությունն ընդունելու հիման վրա՝ անպայման կխանգարեր ազրեսորներին — Գերմանիային, Իտալիային, Ահաստանին և Ճապոնիային՝ անյնպես իրենց զավթողական պլանների իրագործմանը:

Դեռ ավելին. բուրժուական-դեմոկրատական յերկրների գործարար շրջաններն իրենց կառավարությունների գիտությամբ ֆինանսավորում են Փաշխտական պետությունների սպառազի նումները:

Գերմանական սպառազինումների ավերացումը կատարվեց ամենից առաջ Լոնդոնի Միտի տրամադրած վարկերով: Իտալիան իր ավիացիան կառուցեց և ծովային նավատորմն ուժեղացրեց ԱՄՆ-ից և մասամբ Անգլիայից ստացած գրամներով:

Ինչ վերաբերում է ճապոնիային, ապա թեպետև Անգլիան նրան փոխառութիւն չտվեց, բայց ի վնաս իր սեփական տեքստիլ արդյունաբերութիւն և արդյունաբերութիւն մյուս ճյուղերի նախուց ավեց ճապոնական դեմպինգը բրիտանական կայսրութիւն շուկաներում: Համապատասխան միջոցներ ճապոնական դեմպինգի դեմ ձեռք առնվեցին այն գործարար շրջանների բողոքի հետևանքով, վորոնք ճնշում գործ դրին կառավարութիւն վրա:

Յեւ այժմ, յերբ ճապոնական ազդեցութիւնը դժվարութիւններ է կրում, անգլիական բանկերը կառավարութիւն դիտուութեամբ համաձայնութիւն յեկան ճապոնական բանկերի հետ իենի կուրսը պահպանելու մասին: Մոտ անցյալում Անգլիան ճապոնիայի հետ համաձայնութիւն կնքեց, վորի հիմամբ Անգլիան փաստորեն ճանաչեց ճապոնացիների կողմից Շանհայի չինական մաքսատները զավթումը: Իրանով իսկ նախուց և սալիս ճապոնական զավթումների ֆինանսավորումն է հաշիվ Ձինաստանի:

Որենքով Անգլիային է պատկանում առաջին տեղն այն պետութիւնների շարքում, վորոնք իրազործում են մի քաղաքականութիւն, վորն աղաղակող հակասութիւն մեջ է գտնվում ընդհանուր խաղաղութիւն շահերի հետ և վորոնք գրանով իսկ հանցանքի հակայական մասն իրենց վրա յեն կրում՝ ազդեցութիւն արյունոտ հանցազործութիւն համար անգլիական կառավարութիւնը գլխավորող օբսեկցիոն-պահպանողական շրջաններն այժմ կանգնել են պատերազմի ֆաշիստական հրձիգների հետ ուղղակի համաձայնութիւն գալու ուղու վրա:

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՀՐԶԻԳՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՈՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անգլիան պատկանում է ամենահին կապիտալիստական պետութիւնների թվին: Անգլիական տիրապետութիւնները ջրված են ամբողջ յերկրագնդի վրա:

Անգլիան մի շարք դարերի ընթացքում հետևողականորեն և հաստատակամորեն կիրառել է տերիտորիալ զավթումների քաղաքականութիւն, վորն ուղղված է յեղել՝ անգլիական բուրժուազիայի համաշխարհային գերիշխանութիւն ապահովմանը: Իրտանական կայսրութիւնը ծնունդ է առել հենց այդ քաղաքակա-

նութիւն հետևանքով: Անգլիական իմպերիալիզմն իր գերիշխանութիւնը յենթարկեց Իռլանդիան, Կանադան, Ավստրալիան, Յեզիպոտսը, Սուդանը, Պաղեստինը, Իրաքը, Նոր Զելանդիան, Նյուֆաունդլենդը, Հնդկաստանը և ուրիշ շատ յերկրներ: Կրակեցին այնպիսի կարևորագույն ստրատեգիական դիրքեր, ինչպես՝ Ջիրբարտարը և Սուեզը, Մալթա և Կիպրոս կղզիները— Միջերկրական ծովի ավազանում, Ադենը Կարմիր ծովում, Բախրեյան կղզիները—Պարսկական ծոցում, Սինդապուրը—Հնդկական և Հարավային ովկիանոսների կցվածքում, Հոնկոնգը—Հարավային Չինական ծովում:

Հենվելով կարևորագույն համաշխարհային ճանապարհների վրա գտնվող այդ տիրապետութիւնների վրա՝ անգլիական բուրժուազիան, վոր ունի ուժեղ սաղմա-ծովային նավատորմ, վերջին հարյուրամյակում յուրը ազդեցութիւն է գործել միջազգային դեպքերի ընթացքի վրա:

Գերմանական իմպերիալիզմի մրցութիւնը Անգլիայի հետ՝ համաշխարհային գերիշխանութիւն համար՝ այն հիմնական պատճառներից մեկը հանգիստացավ, վորոնք առաջ բերին 1914—1918 թ.թ. իմպերիալիստական պատերազմը: Այդ պատերազմում կայրերական Գերմանիան ջախջախվեց, գերմանական սաղմական նավատորմը, վոր սպառնալիք էր ստեղծել ծովային ճանապարհների վրա գտնվող անգլիական տիրապետութիւն համար, մասամբ խորտակվեցին, մասամբ գրավվեցին անգլիացիների կողմից: Գերմանիան սպառնալիքի հետևանքով գրկվեց իր պապութեային տիրապետութիւններից, վորոնք անցան գլխավորապես Անգլիայի ձեռքը:

Սակայն համաշխարհային պատերազմը բրիտանական իմպերիալիզմին չտվեց ցանկալի գերիշխանութիւնն աշխարհի վերաբերմամբ: Հետպատերազմյան Փրանսիան, վոր իրեն վերագարձրեց կարևորագույն արդյունաբերական իր մարզերը (Ելզաս-Լոթարինգիան, վոր նրանից գրավել էր Պրուսիան 1870 թվին) և ստացավ գերմանական միջանի գաղութներ, ձեռք բերեց շատ ավելի մեծ ազդեցութիւն յեվրոպական գործերի վրա, քան այդ կուղեր Անգլիան: Պատերազմը վերջանալուց հետո Փրանսիան անմիջապես գաշինքներ կնքեց Հարավ-արևելյան և Արևելյան Յեվրոպայի մի շարք պետութիւնների հետ, այն է՝ Հարավ-արևելյան, Չեխոսլովակիայի, Ռումինիայի և Լեհաստանի հետ:

Համաշխարհային պատերազմի ժամանակամիջոցում անչափելիորեն աճեց ԱՄՆ-ի նշանակութիւնը, վորոնք դարձան արն-



տեսական, նմանապես և ռազմական տեսակետից ամենահար-  
պետութուններից մեկը: Միացյալ Նահանգները, վորոնք մեր-  
ձակից են Պաղատ ուղիքանոսի ավազանին և այնտեղ սպառնա-  
լիք են ստեղծել Անգլիայի դերքերի համար,—հանդես յեկան  
վորպես Անգլիայի անմիջական ախոյան համաշխարհային դերիչ-  
խանության համար մղվող պայքարում:

Վաշինգտոնի 1922 թվի կոնֆերենցիայում Միացյալ Նա-  
հանգները կարողացան Անգլիային հարկադրել, առաջին՝ հրա-  
ժարվել դեռևս 1902 թվին Ճապոնիայի հետ կնքած դաշինքից և,  
յերկրորդ՝ ճանաչել Միացյալ Նահանգների իրավունքը՝ Անգլիա-  
յի հետ հավասար ռազմածովային նավատորմ ունենալու: Այս  
յերկու գործոնները բավականաչափ ակնառու կերպով վկայում  
ենին ԱՄՆ-ի տեսակարար կշռի աճման մասին:

Ձգաելով ինչ գնով էլ թեկուզ լինի խանգարել, վորպեսզի  
Փրանսիան Յեվրոպայում զեկավար պետութուն չդառնա, Անգ-  
լիան թեև կոխում է գերմանական իմպերիալիզմին աջակցելու  
ուղին՝ ընդդեմ իր նախկին դաշնակցի: Անգլիան ոգնում է Գեր-  
մանիային սաբոտաժի յենթարկելու Վերսալի պայմանագրերը,  
մասնավորապես Գերմանիայի սպառազինումները իրավունքը  
սահմանափակող վորոշումները: Անգլիան Փրանսիային հարկա-  
դրում է համաձայնել Լոկառնոյի պայմանագրին ստորագրելու,  
վորն, իբր թե անպահովելով Փրանս-գերմանական և գերմանո-  
բելգիական սահմանների անձեռնմխելիութունը, առկախ թողից  
Գերմանիայի արևելյան սահմանների հարցը, այսինքն մի կողմից՝  
Գերմանիայի և մյուս կողմից՝ Չեխոսլովակիայի ու Լեհաստանի  
միջև սահմանները հարցը:

Լոկառնոյի պայմանագրին ստորագրելիս, Փրանսիան, ճիշտ  
է, հաստատեց իր դաշնակցային պարտավորութունները Լեհաստ-  
տանի և Չեխոսլովակիայի նկատմամբ: Այնուամենայնիվ այդ  
ակտը Փրանսիայի դաշնակիցների մեջ վորոշ անվստահութուն  
սերմանեց նրա քաղաքականության վերաբերմամբ: Իրանով ա-  
ռաջին լուրջ հարվածը հասցվեց ռազմա-քաղաքական դաշինքնե-  
րի Փրանսական սիստեմին: Հետագայում Անգլիան ոգնեց Գեր-  
մանիային վերջնականապես ազատվելու ռեպարացիոն վճարում-  
ներից, վորոնց հիմնական մասը պետք է Փրանսիային հասներ և  
այդ պատճառով Անգլիայի համար առանձին հետաքրքրութուն  
չէր ներկայացնում: Անգլիական կառավարող շրջաններն այլևի  
ևս սիրահոփար կերպով համաձայնեցին դրան, քանի վոր Գեր-  
մանիայի կողմից ռեպարացիոն վճարումները դադարեցումը

հիանալի առիթ էր ստեղծում Անգլիայի համար, վորպեսզի նա  
ինքն էլ հրաժարվի իր սեփական պարտքերն ԱՄՆ-ին վճարե-  
լուց:

Հիտլերի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո բրիտանա-  
կան իմպերիալիզմը չհրաժարվեց Գերմանիային աջակցելուց:  
Սա բացատրվում է յերկու պատճառներով.—առաջինն այն է,  
վոր Անգլիան ձգտում է ստեղծել վորոշ հակակշիռ Փրանսիայի  
հանդեպ, յերկրորդը—ռեակցիոն ուժերին աջակցելու բրիտանա-  
կան տրադիցիոն քաղաքականութունն է: Ընդամեն բրիտանա-  
կան իմպերիալիզմը լիովին կողմնակից է գերմանական Փաշիզմի  
կողմից դեպի խորհրդային սոցիալիստական պետութունը տա-  
վող ատելությանը:

Շարունակելով գերմանական իմպերիալիզմին զիջումներ ա-  
նելու իրենց նախկին դիժը, բրիտանական կառավարող շրջան-  
ները հույս ունեն նմանապես, թե իրենց կհաջողվի Գերմանիա-  
յին տրամադրել, վորպեսզի նա հրաժարվի բրիտանական տիրա-  
պետութունների դեմ ուղղված զաղութային պահանջներից:

1935 թ. մարտի 12-ին Գերմանիան, խախտելով Վերսալի  
պայմանագրերը, հայտարարում է իր ռազմական ավիացիան  
ստեղծելու մասին: Փրանսական կառավարութունը հենց այն է՝  
ուզում էր բողոք հայտնել, բայց բրիտանական կառավարոն-  
թյունը խորհուրդ տվեց ձեռնպահ մնալ վորեև հիշեցում անե-  
լուց: Հենց նույն տարվա մարտի 16-ին Գերմանիան միակողմա-  
նի ակտով չեղյալ է հայտարարում Վերսալի պայմանագրի ռազ-  
մական հատվածը, մտցնում է ընդհանուր զինվորական պարհակ:  
Անգլիան դժկամությամբ համաձայնեց մասնակցելու այն  
հատուկ կոնֆերենցիային, վոր 1935 թ. ապրիլին Ստրեզելում  
գումարվեց ստեղծված դրությունը քննելու համար: Կոնֆերեն-  
ցիան վորոշում ընդունեց.—չընդունել Գերմանիայի սպառազի-  
նումները սահմանափակող վորոշումների վերացումը, մինչև վոր  
գերմանական կառավարության կողմից քաղաքական յերաշխիք-  
ներ ստացվեն խողաղությունը չխախտելու մասին: Սակայն ար-  
դեն 1935 թ. հունիսի 18-ին Անգլիան, խախտելով այդ վորոշու-  
մը, գերմանական Փաշիստների հետ համաձայնութուն կնքեց  
ծցվային սպառազինումների մասին, փոխարենն ամենևին վոչ մի  
յերաշխիք չստանալով: 1936 թ. մարտի 7-ին Գերմանիան, հա-  
կառակ վո՛չ միայն Վերսալի, այլև Լոկառնոյի պայմանագրին,  
իր գորքերը մտցնում է Հռենոսյան ազամիլիտարացված գո-  
տին և դիմադրության չի հանդիպում՝ դարձյալ Անգլիայի կող-

միջ Ծրանսիայի վրա դործադրված ճնշման հետևանքով: Հնե-  
նոսյան գոտու վերամիլիտարիզացիան լուրջ վտանգ ստեղծեց  
վոչ միայն Ծրանսիայի՝ այլև բուն Անգլիայի անվանաբանության  
համար, վորի սահմանները, բրիտանական նախկին վարչապետ  
Բորյուինի խոստովանությամբ, գտնվում են Հոնոսում (խոսքը  
այն մասին է, վոր անգլիական սահմանները պաշտպանել կարելի  
է Ծրանսիայի և Բելգիայի սահմանները Հոնոսում պաշտպա-  
նելով միայն):

Անգլիական կառավարող շրջաններն անպայման իրենց հա-  
շիվ են տալիս այն մասին, վոր աշխարհի նոր վերաբաժանման  
գերմանական պլաններն սպառնում են բուն իսկ Անգլիայի շահե-  
րին: Դրանով են բացատրվում այն տեղադրին սպառազինումնե-  
րը, վոր բրիտանական կառավարությունն իրագործում է ի հա-  
կադիո Գերմանիայի: Այդ սպառազինումների ծրագիրը, վոր  
հրատարակվեց 1937 թ. փետրվարի 17-ին, նախատեսում է 1,5  
միլիարդ Փունտ ստերլինգ ծախսեր կատարել բանակի և գլխա-  
վորապես ծովային նավատորմի ու ավիացիայի վրա:

Իր սպառազինումներն ուժեղացնելու հետ միաժամանակ Անգ-  
լիան փորձում է Փաշխտական ազրեսորներեց փրկագնել Կենտ-  
րոնական և Հարավ-արևելյան Յեվրոպայի փոքր յերկրների  
հաշիվին:

Այս քաղաքականությունն առանձնապես ցայտուն կերպով  
բացահայտվեց 1937 թ. վերջին, յերբ բրիտանական կառավա-  
րությունը, չբավականանալով գերմանական Փաշիզմի վերաբեր-  
մամբ Թուրքիայի քաղաքականություն վարելով, կանգնեց  
նրա հետ ուղղակի համաձայնության դալու ուղու վրա: Չեմ-  
բեռլենի աջ ձեռքը—գերմանական Փաշիզմի դործակալների  
«կյալիզենյան կլիկի» ներկայացուցիչ լորդ Գալիֆարը 1937 թ.  
նոյեմբերին Բերլստեսզողենում Հիտլերի հետ ունեցած դրույցի  
ժամանակ նրան պարզ հասկացրեց, վոր Անգլիան շատ քիչ է  
անհանգստացած Ավստրիայի և Չեխոսլովակիայի վիճակով:  
Անգլիան նույնպես հասկացրեց, վոր ինքը պատրաստ է գերմա-  
նական իմպերիալիզմի համար հեշտացնել «Միջին Յեվրոպա»  
ստեղծելու խնդիրը, աջակցել գերմանական այն քաղաքականու-  
թյանը, վորի նպատակն է՝ վիժեցնել Ծրանս-Չեխոսլովակիայի  
դաշնակցային պայմանագիրը, Սորհրդային-Չեխոսլովակիայի փո-  
խադարձ ոգնության պակտը ու միաժամանակ նաև ԽՍՀՄ ու  
Ծրանսիայի միջև կնքված փոխադարձ ոգնության պակտը: Բրի-  
տանական իմպերիալիզմն այս ամենի փոխարեն ուզում է միայն,

վոր գերմանական Փաշիզմը սահմանափակի էր դադու-թային  
ձգտումները և վոր Հիտլերը հրաժարվի անմիջականորեն Անգ-  
լիային ուղղված մյուս պահանջներեց:

Գալիֆարի և Հիտլերի միջև ու այնուհետև Ռիբենտրոպի  
ու Չեմբեռլենի միջև տեղի ունեցած բանակցությունների ար-  
դյունքները հանրահայտ են: Գերմանիան բունի ճանապարհով  
գրավեց Ավստրիան, հենց վոր համոզվեց, վոր ազրեսիայի այդ  
ակտը հակահարվածի չի հանդիպի բուրժուական-դեմոկրատա-  
կան պետությունների կողմից: Փաշխտական Գերմանիան այժմ  
զինված հարձակում է պատրաստում Չեխոսլովակիայի դեմ և  
քայքայիչ աշխատանք է կատարում այդ յերկրում, նմանապես  
և Հարավ-արևելյան Յեվրոպայի մյուս յերկրներում: Բայց  
գերմանական Փաշիզմը, ձեռքերի ադատություն ստացած լինե-  
լով Կենտրոնական Յեվրոպայում, չի ել մտածում վորևէ զիջում-  
ներ անել դադու-թային և մյուս հարցերում:

Հարեչստանում կատարված խտալական ազրեսիայի նկատ-  
մամբ Անգլիայի բունած դիրքը վիկայում է բրիտանական կառա-  
վարող շրջանների քաղաքականության հենց նույն դասակարգա-  
յին գրգռապատճառների մասին: Իտալիայի զավթողական ձղ-  
տումներն Արևելյան Աֆրիկայում, ինչպես արդեն վերևում նշե-  
ցինք, Անգլիայի շահերի դեմ են ուղղված: Ազգերի լիզան 1935  
թվականին Իտալիային ազրեսոր հայտարարեց և առաջարկեց  
նրա վերաբերմամբ սանկցիա կիրառել: Բայց Անգլիայի ձընչ-  
ման տակ Ազգերի լիզան ձեռնպահ մնաց խտալական Փաշիզ-  
մի վերաբերմամբ առավել ազդու սանկցիաներ կիրառելուց—փա-  
կել Սուեզի ջրանցքն իտալական նավերի համար և արգելել՝  
Իտալիային նավթ, ածուխ և հանք վաճառելը: Այն ժամանակվա  
անգլիական արտաքին գործերի մինիստր սեր Սամյուել Հորի  
քաղաքականությունը, այն մինիստրի քաղաքականությունը,  
վորը փորձում էր Ազգերի լիզայի թիկունքում Իտալիայի հետ  
համաձայնության դալ՝ Հարեչստանը բաժանելու մասին,—լիակա-  
տար քայքայում մտցրեց խտալական ազրեսիային հակահարված  
տալու կողմնակիցների շարքերը և դյուրացրեց Մուսոլինիի  
զավթողական պլանների իրագործումը:

Հարեչստանի հարցում Անգլիայի վարած քաղաքականու-  
թյունը հիմնականում վորոշվում էր հետևյալ նկատառումնե-  
րով.—Անգլիան չէր ուզում թույլ տալ Փաշխտական Իտալիայի  
հաղթությունը Հարեչստանի դեմ մղվող պատերազմում, վորով-  
հետև նա իրեն հաշիվ էր տալիս այն մասին, վոր այդպիսի հաղ-

Թուօթյունը կթուլացնի բուն իսկ Անգլիայի դերքը Միջերկրական ծովի արևելյան մասում և Կարմիր ծովի ավազանում: Սակայն Անգլիան չեր ցանկանում նաև կիսադաղութային Հաբեշտանի հաղթութունը, վորչափով այդպիսի հաղթանակը կարող եր, բրիտանական իմպերիալիզմի տեսակետից, վտանգավոր աղղեցուցութուն գործել մյուս ճնշված յերկրներն ազգային-ազատագրական շարժման դարդացման վրա: Անգլիան չեր ուղում նաև Իտալիայի պարտութունը, վորովհետև Հաբեշտանի ավանտյուրայի ճախողումը կնշանակեր սեակցիայի պարտութուն, վորի համար ամենից քիչ ե շահագրգռված բրիտանական իմպերիալիզմը:

Հաբեշտանում կատարված իտալական ազրեսիայի նկատմամբ Թողալության ուղիով գնալով՝ բրիտանական կառավարութունը հարցի լավազույն լուծումը համարեց համաձայնության գալ իտալական Փաշիզմի հետ՝ ի հաշիվ հաբեշական ժողովրդի շահերի: Ճաշխատական Իտալիան կարողացավ ոգտվել Թողալության անգլիական քաղաքականութունից, վորպեսզի պարտության մասնի Հաբեշտանին, իսկ վերջին հաշիվով—Անգլիային:

Իսպանական հարցում Անգլիան բռնել ե նույն դերքը, վորի իմաստն ե՝ համաձայնության գալ Փաշխատական ազրեսորների հետ՝ ի հաշիվ յերրորդ կողմի: Այստեղ ել Անգլիան վերջին հաշիվով գոհեց իր ազգային շահերը հանուն խոշոր Փինանսական բուրժուազիայի փոքր իմբի շահերի:

Հախառակ աշխատավորների լայն մասսաների և անգլիական առաջավոր ինտելիգենցիայի բոլոր պրոգրեսիվ տարրերի ցանկության, վորոնք տոգորված են մեծագույն համակրանքով դեպի հերոսական իսպանական ժողովուրդը, Անգլիայի կառավարող շրջաններն արել են ու անում են ամեն հնարավոր բան, ինչ վոր անհրաժեշտ ե խուճարարների և ինտելիկենտների դործունեյությունը հեշտացնելու համար:

Չպետք ե մոռանալ, վոր իսպանական դործերին «չմիջամբտելու» վերաբերյալ համաձայնությունը կնքել են Անգլիայի պնդումով, վորպեսզի որինական հանրապետական կառավարությանը զրկեն արտասահմանում գեներ գեներու հնարավորությունից, վորն անհրաժեշտ ե իսպանական ժողովրդի պաշտպանության համար՝ ընդդեմ Փաշխատական ազրեսիայի:

Լոնդոնում ստեղծվեց չմիջամտելու կոմիտե լորդ Պլիմուտի նախագահությամբ: Բրիտանական կառավարությունը ամենեին

ել պատահարար չե իր ընտրության մեջ կանգ առել լորդ Պլիմուտի վրա: Ճիշտ ե, այդ հարգարժան լորդը անցյալում հայտնի յե յեղել վո՛չ այնքան քաղաքական ասպարեզում, վորքան իբրև՝ ազնվացեղ վարդուն ճիերի նուրբ մասնագետ: Սակայն լորդ Պլիմուտը, վոր ունի 30500 ակր հող, պատկանում ե անգլիական ամենախոշոր լենդլորդերի թվին, վորպիսի հանդամանքը նախապես վորոշում եր իսպանական Փաշխտներին ոգնելու նրա պատրաստակամությունը: Յեվ իսկապես, լորդ Պլիմուտի դեկավարությամբ կոմիտեն «չմիջամտել» բառը հասկացավ այն իմաստով, վոր կոմիտեն ինքը չպետք ե միջամտի իսպանական դեպքերին չմիջամտելու դործին, ինչպես վոր սրամտորեն ասաց ընկ. Լիտվինովը:

Բրիտանական կառավարությունը մի ժամանակ փորձում եր քողարկել իր թշնամական վերաբերմունքը դեպի հանրապետական Իսպանիան: Բայց Չեմբերլենի վարած գծի կենսագործման հետ գուզընթաց, այն գծի, վորի եյությունն ե՝ համաձայնության գալ Փաշխտական ազրեսորների հետ,—ավելի ու ավելի պարզ ե դառնում Անգլիայի դերքն իսպանական հարցում: Անգլիան հեազհետե անցավ՝ խուճարարներին ու ինտելիկենտներին ուղղակի աջակցություն ցույց տալու բացահայտ քաղաքականությանը:

Անգլիական կառավարությունը հույս ուներ, վոր խուճարարների ու ինտելիկենտների հաղթության դեպքում Գերմանիային ու Իտալիային չի հաջողվի իրենց ազրեցությունն ամրապընդել Իսպանիայում: Անգլիական կապիտալիտաները յեշնում եյին նրանից, վոր Գերմանիան և Իտալիան Փինանսական ու տնտեսական դժվարին դրության մեջ են գտնվում: Անգլիական բանկային շրջաններն առաջնորդվում եյին այն հաշիվով, վոր խուճարարների հաղթության դեպքում Իսպանիայի ապագա Փաշխտական կառավարությանը խոշոր փոխառություն կառաջարկեն և այդ ճանապարհով կամբապնդեն իրենց քաղաքական ու տնտեսական գերքերն Իսպանիայում:

Սակայն Անգլիան աչքաթող ե անում այն հանդամանքը, վոր Գերմանիան ու Իտալիան արդեն հենց հիմա ել տեր ու տնորինություն են անում խուճարարների գրաված իսպանական տերիտորիայում և առաջին հերթին Մարոկկոյում, Բալեարյան ու Կանարյան կղզիներում: Տարակույս չկա այն մասին, վոր Փաշխտական ինտելիցենցիայի հաջողության դեպքում գերմանական և իտալական Փաշխտները դրության տերը կդառնան:

ամբողջ Իսպանիայում : Յեւ ղժվար թե Լոնդոնի Սիտին կարողանա փոխել այն դրությունը, վոր ստեղծվել է իմպերիալիստական ուժերի այս նոր հարարերակցության հետևանքով :

Հետաքրքրական է վերհիշել յերկու միջադեպ, վորոնք հաստատում են, վոր բրիտանական կառավարությունը, Փաշխտական ազբեսորներին աջակցելու քաղաքականություն կիրառելով, պատրաստ է հաշտվելու անգլիական պետական շահերի խախտման հետ :

1937 թ. սեպտեմբերի 1-ին Փաշխտական ծովահենները խորտակեցին անգլիական «Վուդֆորդ» շոգենավը : Թվում էր, թե Անգլիան, վորի կայսերական ճանապարհները կախում ունեն ծովային նավազնացության անվտանգությունից, հարկ կհամարի ամենայնուհանդուս միջոցները ձեռք առնել բրիտանական դրոշակի անձեռնմխելիությունն ապահովելու համար : Անգլիական հասարակական կարծիքը պնդում էր այդպիսի միջոցներ ձեռք առնելու : Իրա փոխարեն պաշտոնական հաղորդագրություն հրատարակվեց, վորի մեջ նշված էր, վոր թեպետև խորտակված շոգենավն իրոք լողում էր բրիտանական դրոշակի ներքո և դրակցված էր անգլիական նավահանգստին, բայց նրա անձնակազմը բաղկացած էր գլխավորապես... հույներից : Բրիտանական կառավարությունը գտնում է, վոր այդ հանգամանքն իրեն ազատում է ծովահենության դեմ պայքարելու անհրաժեշտությունից :

«Վուդֆորդ» շոգենավի խորտակումից հետո շատ չանցած՝ անգլիական եամին «Սեվոկը» Սան-Անտոնիո հրվանդանի մոտ—Ալիկանտեյի ու Վալենսիայի միջև գտնված միջոցին հարձակման յենթարկվեց «անհայտ ազգության» պատկանող մի սուզանավի կողմից : Սուզանավի բաց թողած տորպեդները չգիպան եամինին : «Սեվոկը» և նրա կանչած բրիտանական եամինեցներ՝ «Գարդին», «Հիպերնոնը», «Հիրվարդը» և «Տրեստին» վորոշեցին սուզանավի մոտավոր գոնան և խորասլաց ուժերը տեղացին նրա վրա : «Սեվոկի» հրամանատար լեյտենանտ Քյուրեջի պաշտոնական գեկուլցի համաձայն, նրան հաջողվեց ավերել սուզանավի նավթամբարները, սա դատելով այն բանից, վոր ծովի յերես էր դուրս յեկել՝ առատ քանակությամբ նավթ : Այնուամենայնիվ բրիտանական ծովային վարչությունն արտասովոր շտապողականությամբ հայտարարեց, վոր «Սեվոկի» վրա կատարված հարձակման պատմությունը հերթակալ սպայի պարապ յերեակայության արդյունքն է հանդիսանում . այդ սպան Փաշխտական տորպեդի տեղ է ընդունել եամինի կողքին չըրմ—

իացող չարածձի դեյֆինին : Ասենք, ծովային վարչությունը հենց այդպես էլ չբացատրեց, թե վո՞ր ժամանակից են դեյֆիններն սկսել նավթ արտաթորել :

Այս փաստերը ցայտուն կերպով ցույց են տալիս, վոր բրիտանական կառավարությունը, ի հաճույս՝ ազբեսորներին աջակցելու և նրանց հետ համաձայնության դալու քաղաքականության, պատրաստ է վո՛չ միայն հաշտվելու ծովահենության հետ, այլև ծիծաղելի լուսաբանությամբ ներկայացնելու բրիտանական նավատորմի հրամանատարությանը, այն նավատորմի, վորը հինգ եամիններից բաղկացած կազմով դուրս էր յեկել... դեյֆինի վորսի :

Անգլիան բացահայտորեն ձգտում է ապահովել խուժարարների և խալիո-գերմանական ինտերվենտների հաղթանակը : Սրանով է բացատրվում այն, վոր բրիտանական կառավարությունն արգելք չի հանդիսանում Փաշխտական ինտերվենցիայի ուժեղացմանն Իսպանիայում և վոր միաժամանակ թույլ չի տալիս սահմանների բացումն Իսպանիայի ու Ֆրանսիայի միջև, վորպիսի հանգամանքը կհեշտացներ հանրապետական բանակի՝ գեների մատակարարումը : Անգլիական կառավարությունն իր ներկայացուցիչն ուղարկեց Սալամանկա և հաստատամտորեն ձգտում է, վորպեսզի Ֆրանկոյի նկատմամբ ճանաչվեն պատերազմող կողմի իրավունքներ : Վերջին հանգամանքը թույլ կտար խուժարարներին և ինտերվենտներին՝ ել ավելի ամուր ձեռք տալ բրիտանի գոտին, վորն առանց այն էլ սեղմ կերպով ողակել է հանրապետական Իսպանիային : Իրանով է, վերջապես, բացատրվում նաև այն, վոր բրիտանական կառավարությունն ըստ ելության շտապեցնում է ինտերվենտներին, կոչ անելով նրանց՝ լուծարել յենթարկել «իսպանական հարցը», վորն՝ Անգլիային դարձնում է Անգլիայի ու մյուս պետությունների պրոպեգանդ շրջանների կողմից կատարվող գայրադին դրոհների թիրախը :

Անգլո-իտալական «տրադիցիոն» բարեկամության վերականգնումն ամենեւին էլ պատահաբար չզուգադիպեց Իսպանիայում կատարվող Փաշխտական ինտերվենցիայի ուժեղանալուն :

Ապրիլի 16-ին ստորագրված անգլո-իտալական համաձայնությունն Անգլիայի կապիտալիստական քաղաքականության նոր արտահայտությունն է հանդիսանում :

Այդ համաձայնության բովանդակությունը հիմնականում հանդուժում է հետեյալին.—յերկու կողմերը պարտավորվում են

պահպանել ստատուս-քվո (գոյութուն ունեցող դրութիւնը) Միջերկրական ծովի արեւմտյան մասում, ինքորմացիայի փոխանակութիւն կատարել ուժերի վերախմբավորումների մասին՝ Միջերկրական ծովի, Կարմիր ծովի և աֆրիկական տիրապետութիւնների շրջաններում, նաև հարգել արաբական պետութիւնների «անկախութիւնը»։ Իտալիան Անգլիայի համար սպահովում է նրա շահերը Տանա լճի շրջանում (Հարեջտան)։ Համաձայնութիւն է կայացված այն մասին, վոր յերկու կողմերն ազատ ոգտվեն Սուեզի ջրանցքից։ Անգլիան ճանաչում է Իտալիայի փաստական ազդեցութիւնը Միջին Արևելքի յերկրներում, պարտավորվում է Ազգերի լիգայի միջոցով անցկացնել Հարեջտանի գրամման ճանաչումը և սանկցիա յե տալիս Իսպանիայում կատարվող իտալական ինտերվենցիային։

Համաձայնութիւնն ամբողջութեամբ քաղկացած է Փաշիտական Իտալիային արված անգլիական զիջումներից, վորոնք փոխարեն Անգլիան վոչինչ չի ստացել։

Բրիտանական կառավարական մամուլը, արդարացնելով Չեմբերլենի քաղաքականութիւնը, վործում է հաստատել, վոր Իտալիայի հետ Անգլիայի մերձեցման հիմնական նպատակն է թուլացնել «Հոռոմ—Բեռլին առանցքը»։

Սրանում ճշմարտութեան վորոշ մասնիկ կա անպայման։ Անգլիան ղեմ է իտալո-գերմանական հակասութիւնները, վորք ինչ խորացնելուն, վոր անտարակույս գոյութիւն ունեն, չնայած «Հոռոմ—Բեռլին առանցքի» առկայութեանը։ Խրախուսելով Ալստորիայի գաղթումը, Անգլիան վոչ միայն ձգտում էր հետ պահել Փաշիտական Գերմանիային նրա դաղութային նկրտումներից, այլև ուզում էր վորոշ չափով թուլացնել «Հոռոմ—Բեռլին առանցքը»։

Սակայն այդ չէ անգլո-իտալական համաձայնութեան իմաստը։ Համաձայնութեան վերջնական նպատակը իսպանական հարցի լուծումն էլ չէ, այլ «չորսի պակտը» (Իտալիա, Գերմանիա, Անգլիա և Ֆրանսիա) գաղափարի իրականացումն է, վորը պետք է, Չեմբերլենի մտքով, փոխարինի կոլեկտիվ անվտանգութեան սխտեմին։ Վոր այդ պակտը հակախորհրդային ուղղութիւն ունի, դրանում հարկ չկա կասկածելու։

Բրիտանական կառավարութիւնը ձգտում է իրականացնել «չորսի պակտը» իսպանական հանրապետութիւնը խեղդելու և բրիտանական ու ֆրանսական ստրատեգիական շահերը վորոնահարելու գնով։

Չեմբերլենը համաձայնեց անգլո-իտալական մերձեցում ստեղծելուն այն պատճառով, վոր անգլիական ռեակցիոներները ցանկանում են ղեներալ Ֆրանկոյի հաղթութիւնը և ուզում են դյուրացնել հանրապետական Իսպանիայի ջախջախումը Փաշիտական Իտալիայի կողմից։ Այս նրանով է հաստատվում, վոր ասպրիլի 16-ին ստորագրված համաձայնութիւնը նախատեսում է, թէ իտալական զորքերը Պիրենեյան թերակղզին և իսպանական տիրապետութիւններն ազատում են Ֆրանկոյի և նրա Փաշիտ տերերի հաղթութեան ղեպքում։

Անգլիայի կառավարող շրջանները, վորոնք այնքան էլ միամիտ չեն, անտարակույս հասկանում են, վոր իտալական Փաշիզմը կամովին չի հրաժարվի Իսպանիայում գաղթած իր ղերքերից։ Սակայն և այնպես բրիտանական իմպերիալիզմը գերադասում է եյական վնաս հասցնել իր անվտանգութեանը, միայն թէ թույլ չտա, վոր իսպանական ժողովուրդը հաղթութիւն տանի։

Հարեջտանի գրամման ճանաչումն Անգլիայի կողմից՝ նույնպես լուրջ զիջումն է իտալական ագրեսորին։ Ասենք, տվյալ ղեպքում բրիտանական իմպերիալիզմը հոգացել է այն մասին, վոր պատվարի իր սեփական շահերը, մասնավորապես Տանա լճին մերձակից մարզերում։

Անգլիան կիրառել է ու կիրառում է թողտվութեան և աջակցութեան քաղաքականութիւն վոչ միայն գերմանական և իտալական ագրեսորների վերաբերմամբ։ Պատերազմի Փաշիտական հրձիգների հետ խոսքը մեկ անելու անգլիական պլանները Յեվրոպայի սահմաններից էլ ղենն են անցնում։

ԱՄՆ-ի ճնշման ներքո Անգլիան ստիպված յեղավ 1922 թվին հրաժարվել ձապոնիայի հետ կնքած ռազմական դաշինքի վերաբերյալ իր պայմանագրից։ Սակայն անգլո-ճապոնական դաշինքի լուծումից հետո Անգլիան չի դադարել ամենասերտ հարաբերությունները պահպանել ճապոնական իմպերիալիզմի հետ և իրաթիւնները սպահանել ճապոնական իմպերիալիզմի հետ և իրաթիւնները Յեվրոպայի սահմաններից էլ ղենն են անցնում։

Անգլիական բուրժուազիան նաև լուրջ կերպով անհանդուստացած էր Չինաստանի ազգային-ազատագրական շարժման պարագայում, վորն ուղղված է իմպերիալիստական տերութիւնների ազդեցութեան ղեմ։ Ահա թէ ինչու Անգլիան հապրանքով էր վերաբերվում նաև ճապոնական ռազմամոլների մատուցած ծախսերին։ Անգլիական կառավարութիւններին Չինաստանում։

րող շրջանները միաժամանակ հույս ունեցին, վոր ճապոնական երազանսիան Չինաստանում կազմանափակվի այն տերիտորիաներով, վորոնք լուրջ հետաքրքրութուն չեն ներկայացնում բրիտանական Ֆինանսական կապիտալի համար: Արմատապես սխալ այդ տեսակետի վրա յե կառուցված Անգլիայի վերաբերմունքը Չինաստանում կատարվող ճապոնական աղբսիայի հանդեպ:

1931 թ. սեպտեմբերին Ճապոնիան զավթեց Մանջուրիան: Չինաստանը, վոր Ազգերի լիգայի անդամ է, ոգնության է դիմում՝ ազրեսորի դեմ: Սեր Չոն Սայֆոնը, այն ժամանակվա անգլիական արտաքին գործերի մինիստրը, վճռականապես առարկում է՝ չին-ճապոնական կոնֆլիկտին Ազգերի լիգայի կողմից միջամտութուն ցույց տալու դեմ: Այդ ժամանակաշրջանում միջադգային իրադրութունը բացառիկ կերպով նպաստավոր էր Ճապոնիայի զավթողական գործողութուններին դեմ հակահարված կադմակերպելու համար: ԱՄՆ-ը չափազանց անհանդուստացած էյին ճապոնական աղբսիայի պատճառով:

Անգլիայի դիրքը հասցրեց այն բանին, վոր Ազգերի լիգան սահմանափակվեց Մանջուրիա ուղարկելով հատուկ ջննիչ հանձնաժողով, վորի խնդիրներն ընդամին խիստ սահմանափակված էյին:

Ճապոնական ուղղամտները շատ շուտ ցույց տվեցին, վոր Մանջուրիայի զավթումը միայն առաջին քայլն է ամբողջ Չինաստանը ճապոնական գաղութ դարձնելու ճանապարհին: Ճապոնական աղբսիայի հետագա աճումը չեր կարող կոնդոնում անհանդուստութուն առաջ չբերել, թեև Անգլիայի քաղաքականությունն առաջվա պես վորոշվում էր Չինաստանի աղաջինադատադրական շարժման հանդեպ գոյութուն ունեցող յերկյուղով և Ճապոնիային իՍՂՄ դեմ ոգտագործելու հնարավորության պահպանման ցանկությամբ: «Փասիֆիկ Աֆֆերս» ժուռնալն այն ժամանակ նշում էր, վոր, Անգլիայի ղեկավար քաղաքական գործիչների կարծիքով, «Ճապոնիայի հետ բարեկամութուն ունենալը չի կարելի արհամարհել, վորովհետև Ճապոնիան անուղղակի կերպով պաշտպանում է անգլիական շահերը կոմունիզմի տարածման դեմ»:

Ճապոնիայի վերաբերմամբ Անգլիայի քաղաքականությունը վորոշվում է դարձյալ նույն ձգտումներով՝ ապահովել սեակցիոն ուժերի հաղթանակը: Մատների արանքով նայելով ճապոնական զավթողական քաղաքականությանը, անգլիական կառավարու-

թյունը միաժամանակ համոզում է ճապոնական աղբսորին՝ չխախտել բրիտանական իմպերիալիզմի շահերը կենտրոնական և Հարավային Չինաստանում:

Լիովին համապատասխան իրենց այս դժին՝ Անգլիայի կառավարող շրջանները 1937 թվականին էլ վճռականապես առարկեցին՝ չին-ճապոնական պատերազմին Ազգերի լիգայի կողմից միջամտութուն ցույց տալու դեմ: 1937 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհուրդի սանդած «քաներեքի կոմիտեյ» և 1937 թ. նոյեմբերի՝ Բրյուսելի կոնֆերենցիայի գործունեյութունը հակաերգործութուն ցույց չտվեց Չինաստանում կատարվող ճապոնական աղբսիայի վրա, վորովհետև հակառակում էյին Անգլիայի ներկայացուցիչները, վորոնք փորձում էյին անմիջականորեն համաձայնության դալ ճապոնական իմպերիալիզմի հետ: Անգլո-ճապոնական համաձայնության փորձերից վոչինչ գուրս չեկալ, սակայն բրիտանական կառավարությունը հենց այժմ էլ շարունակում է գաղանի բանակցութուններ վարել ճապոնական ուղղամտների հետ՝ Չինաստանը բաժանելու մասին:

## ՖՐԱՆՍԻԱ

Ձգտելով համաձայնության դալ աղբսորների հետ, անգլիական սեակցիոններները զանց են անում Ֆրանսիայի անվտանգությունը: Չեմբելները ձգտում է աղբսորի հետ համաձայնության դալու կործանիչ ուղին քաշել նաև Ֆրանսիային, ուղում է նրան մատնակից դարձնել «չորսի պակտին», այսինքն Հիտլերի ու Մուսոլլինիի հետ կադմեկիք բլոկին:

Անգլիան իր դավաճան քաղաքականությամբ կարողացալ զղալիորեն թուլացնել Ֆրանսիայի գրութունը Յելլրոպայում:

Ֆրանսական կառավարող շրջանները կկարողանային հեղտությամբ ապահովել Ֆրանսիայի անվտանգության շահերը: Դրա համար նրանք պետք է ամուր դիրք բռնեն արտաքին քաղաքականության ամենակարևոր հարցերում և, չհրաժարվելով Անգլիայի հետ համագործակցելուց, դադարեն անգլիական քաղաքականության դերի դառնալ: Այս իր ժամանակին հասկացել էր Լուի Բարտուն՝ այն ժամանակվա Ֆրանսական արտաքին գործերի մինիստրը: Նա ձգտում էր ամրադնել Ֆրանսիայի դաշնակցային հարաբերութունները փոքր Աստանտի և Լե-

**Հաստատելի հետ, ձգտում էր Ազգերի լիգայի սեփեղացմանը և ՄՍՀՄ հետ համագործակցությունը դարգացնելուն:**

Բարտուն միանգամայն ճիշտ էր հաշվում, վոր Գերմանիան այդ պայմաններում չէր համարձակվի անցնել իր դավթողական պլանների իրագործմանը: Անգլիան այդ դեպքում ստիպված կլիներ հաշվի առնել խողաղությունը պահպանելու գործում շահագրգռված պետությունները կամքը: Բայց Բարտուն սրբանվեց Փաշխտական պետությունների գործակալների ձեռքով, վորոնք վճռել էին ինչ գնով ել լինի մեջտեղից վերացնել Ֆրանսական այդ խոչորագույն քաղաքական գործչին, վորը գտել էր խողաղությունն ամրապնդելու և Ֆրանսիային վորպես մեծ տերություն պահպանելու ճիշտ ուղին: Բարտուն հաջորդները՝ արտաքին գործերի մինիստրի պոստում, ինչպես և նրա նախորդները, շարունակեցին ստրկամտորեն ընդորինակել Անգլիային, նրա հետ համագործակցելը համարելով փրկություն բոլոր գեթախություններից:

Ֆրանսիայի արտաքին քաղաքականությունը վերջին տարիների ընթացքում վորոշվում էր դգայի չափով՝ վ՛չ թե Փարիզում, այլ Լոնդոնում: Այդ դրությունը չփոխվեց նաև այն բանից հետո, յերբ ժողովրդական ճակատը հողթանակեց պառլամենտական ընտրություններին (1936 թ. մայիսին): Այս նրանով է բացատրվում, վոր Ֆրանսական սոցիալիստների, մասնավորապես Բլյումի տատանումների և ուղղիկալ կուսակցության սարսափի պատճառով այդ հողթանակը դեռևս չստեղծեց ժողովրդական ճակատի իսկական կառավարություն, վոր գործով լիովին իրականացներ նրա ծրագիրը ինչպես ներքին, նույնպես և արտաքին քաղաքականության ասպարեզում: Ֆրանսիայի փաստական տերերն են շարունակում մնալ՝ արդյունաբերական և բանեկային կապիտալի մագնատները—հռչակավոր «200 ընտանիքները»: Նրանց ձեռքին են գտնվում Ֆրանսական եկոնոմիկայի բոլոր իշխող բարձունքները, և նրանք այդ ողտագործում են կառավարության քաղաքականության վրա ներգործելու համար: Կարիներտների 1936 թ. մայիսից սկսած տեղի ունեցող հաճախակի փոփոխումը հետևանք է հենց նույն Ֆինանսական ոլիգարխիայի մանյովրների, վորը բացելիքաց ձգտում է Ֆրանսիայի Փաշիզացմանը և պատրաստ է անձնատուր լինել գերմանական Փաշիզմի հանդեպ:

Պատգամավորների պալատի ընտրություններին ժողովրդական ճակատի տարած հողթանակից անմիջապես հետո՝ 1936 թ.

ստեղծված կառավարությունը, ժողովրդական յայն մասսաների ճնշման ներքո, իրողործեց մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական ձեռնարկումներ: Ռեակցիոն ֆրանսական բուրժուազիան այժմ մոլեգնարար ղինվեց Ֆրանսիայի բանվոր դասակարգի, դյուրացիության և աշխատավոր ինտելիգենցիայի այդ նվաճումների դեմ: Ռեակցիայի մեքենայությունները հանդիպում են ժողովրդական մասսաների քաջարի հակահարվածին, մասսաներ, վորոնց ղլխավորում է կոմունիստական կուսակցությունը: Բայց արտաքին քաղաքականության ասպարեզում Ֆրանսական ուսակցիան չզիջեց ժողովրդի սնդումներին, վորը պահանջում է վարել այնպիսի քաղաքականություն, վորի նպատակը լինի՝ ուժեղացնել Ազգերի լիգան և կոլեկտիվ անվտանգությունը, ամրապնդել համագործակցությունը ընդհանուր խողաղության պատվով համագործակցությունը ընդհանուր Միության հետ: Ֆրանսական վար հանդիսացող Խորհրդային Միության հետ: Ֆրանսական բուրժուազիայի ուսակցիոն շրջանները բոլոր ջանքերը գործադրեցին, վորպեսզի խանգարեն Ֆրանս-խորհրդային հարաբերուած թյունների դարգացմանը՝ ազրեսորի դեմ փոխադարձ ողնություն պակտի հիման վրա, վոր կնքվել է ՄՍՀՄ ու Ֆրանսիայի միջև դեռևս 1935 թ. մայիսի 2-ին:

Ուրիշ կարևորագույն հարցերում ևս Ֆրանսական կառավարությունը, ուսակցիոն բուրժուազիայի ճնշման ներքո, կիրառել է պատերազմի Փաշխտական հրձիգների վերարերմամբ թողտվության քաղաքականություն—լիովին համաձայն Անգլիայի պահպանողական շրջանների հետ:

Ֆրանսիան, ինչպես հայտնի յե, իրականում իրագործում է հանրապետական Իսպանիայի բլոկադան:

Մինչդեռ խռովարարները և ինտերվենտների հողթությունն Իսպանիայում՝ անմիջականորեն սպառնում է Ֆրանսիայի անվտանգությանը: Պիրենեյում Փաշխտական բանակների հանդես գալն զգալիորեն կթուլացնի Ֆրանսիայի ստրատեգիական դրությունը, վոր խիստ վտանգել է Հսկնոսյան դոտու վերամիլիտարիզացիայի և Ֆրանսիայի դեմ ուղղված իտալո-գերմանական համագործակցության ամրապնդման հետևանքով: Փաշխտական Իտալիան, ամրանալով Բալեարյան կղզիներում, կկարողանար ամեն մի ժամանակ խախտել Ֆրանսիայի կապն իր դաղությունին տիրապետությունների, մասնավորապես Հյուսիսային Աֆրիկայում ունեցած տիրապետությունների հետ: Իսկ հայտնի յե, վոր ֆրանսական բանակը Մարոկկոյի և աֆրիկական մյուս դաղությունների գորքերով լրացնելու պրորեմը կարևոր տեղ է բռնում

Փրանսական զլխավոր շտաբի մորբիլիզացիոն պլաններում: Փրանսիան աֆրիկական իր գաղութներից ստանում է այն հումքի հիմնական տեսակները, վորն անհրաժեշտ է արդյունաբերութեան համար ինչպես խողաղ ժամանակ, այնպես էլ առանձնապես պատերազմի ժամանակ: Իտալիան կկարողանար հեշտութեամբ նաև խախտել Փրանսիայի կապը Հնդկաչինի ու Փրանսական այն արապետութեանների հետ, վորոնք գտնվում են Միջերկրական ծովի ավազանից դուրս:

Իտալո-գերմանական հանցավոր պատերազմի նկատմամբ Փրանսիայի կառավարող շրջանները կողմից թողալուց յուրեք քաղաքներն՝ ընդդեմ իսպանական ժողովրդի՝ զգալի չափով հեռավանք է այն ազդեցութեան, վոր Փրանսական Ֆինանսական կապիտալը գործում է կառավարութեան քաղաքականութեան վրա: Փրանսական Ֆինանսական կապիտալը հազարավոր կապերով կապված է Ֆաշիստական պետութեանների կապիտալիստական շրջանների հետ: Իսկ Փրանսիայի դիրքն իսպանական հարցում վորովիցու տեսակետից հիմնական դեր խողաց Անգլիայի դիրքը, վորը Փրանսական ժողովրդական ճակատին վերաբերվում է վոչ պակաս ատելութեամբ, քան իսպանիայի ժողովրդական ճակատին: Անգլիական ռեակցիան հույս ունի, վոր իսպանական հանրապետութեան կործանումը կնախապատրաստի ժողովրդական ճակատի ջախջախումը նաև Փրանսիայում և կխանդարի Անգլիայի ժողովրդական մասսաների միջև միասնութեան հաստատվելուն:

Անգլիայի հետ համագործակցելու նշանակութեանը Փրանսիայի համար խիստ չափազանցներով, Փրանսական կառավարութեանը գործում էր փաստորեն Անգլիայի ցուցումով՝ արտաքին քաղաքականութեան բոլոր կարևորագույն հարցերում: Մրա հետևանքը յեղավ այն, վոր Գերմանիան վերացրեց Վերսալի պայմանագրի ռազմական հատվածը, վերամիլիտարիզացիայի յենթարկեց Հռենոսյան գոտին, Փրանսիան լիովին կորցրեց Լեհաստանը, վոր վերջնականապես ներգրավված է ազդեցորների բանակը, քայքայվեց վորք Անտանտը, գերմանական Ֆաշիստները գավթեցին Ալստրիան, հարձակման յենթարկվելու սպառնալիք ստեղծվեց Չեխոսլովակիայի համար և վերջին հաջվով՝ Թուրքացան Փրանսիայի դիրքերը Յեվրոպայում:

Նման քաղաքականութեան կործանարար լինելը Փրանսիայի համար՝ հատկապես ակներև դարձավ, յերբ Անգլիան ազդեցության յերես տալու և աջակցելու քաղաքականութեանից անցավ՝

պատերազմի Ֆաշիստական հրճիղների հետ ուղղակի համաձայնութեան գալու քաղաքականութեան: Այնուամենայնիվ Փրանսիայի կառավարող շրջաններն այժմ ել հլու-հնազանդ հետևում են Անգլիային:

1938 թ. ապրիլի վերջին Փրանսական կառավարութեան ղեկավար Դալադյեն և արտաքին գործերի մինիստր Բոնեն հրավիրվեցին Լոնդոն ինֆորմացիա տալու 1938 թվի ապրիլի 16-ի անդր-իտալական համաձայնութեան բովանդակութեան մասին և բրիտանական կառավարութեան ներկայացուցիչներին հետ միասին քննարկելու յեվրոպական քաղաքականութեան հիմնական հարցերը, նմանապես և անդր-Փրանսական ռազմական համագործակցութեան ուժեղացման հարցը: Անդր-Փրանսական բանակցութեանները հետևանք եյին Ֆաշիստական պետութեանների կողմից՝ աճած սպառնալիքի: Անդր-Փրանսական համագործակցութեանն անվիճելիորեն կարող էր վորպես խողաղութեան հաստատուն բաստիոն ծառայել կոլեկտիվ անվտանգութեան սխտեմում: Բայց բրիտանական դիվանագիտութեանն ամենից քիչ է տրամադիր պաշտպանելու կոլեկտիվ անվտանգութեանը: Փրանսիայի հետ բանակցութեաններ վարելու նպատակն էր՝ առաջին հերթին ուժեղացնել Անգլիայի դիրքն՝ ազդեցորների հետ բանակցութեաններ վարելու և համաձայնութեան գալու համար:

1938 թ. ապրիլի 27-29 տեղի ունեցած անդր-Փրանսական բանակցութեանների արդյունքը յեղավ այն, վոր բրիտանական կառավարութեան պետ Չեմբերլենին և արտաքին գործերի մինիստր Գալիֆաքսին առանց հատուկ դժվարութեան հաջողվեց Դալադյեյին և Բոնենյին հարկադրել ամբողջապես միանալու Անգլիայի դիրքին՝ հանրապետական Իսպանիայի վերաբերմամբ: Փրանսիայի ներկայացուցիչները հաստատեցին իրենց պատրաստակամութեանը՝ շարունակելու իսպանական գործերին «չմիջամտելու» դավաճանական կոմեդիան, չնայած իտալո-գերմանական ինտերվենցիայի ուժեղացմանը:

Ինչ վերաբերում է Չեխոսլովակիային, ապա Դալադյեն և Բոնեն հաստատեցին, վոր Փրանսիան հավատարիմ է մնում այդ յերկրի վերաբերմամբ ունեցած իր դաշնակցային պարտավորութեաններին, բայց միաժամանակ նրանք սանկցիա տվին Անգլիայի յեկույթին, վոր առաջարկում էր միջնորդութեան Գերմանիայի ու Չեխոսլովակիայի միջև՝ Սուդետա-գերմանական մարզին ավտոնոմիա տալու հարցի լուծման համար:



Ֆրանսական անվտանգութեան անմիջականորեն վերաբերող հիմնական հարցերում Ֆրանսական կառավարող շրջանները լիս-վին անձնատուր յեղան բրիտանական խմբերի առջև: Անգլիան իր կողմից սահմանափակից՝ խոստանալով ուժեղացնել կոնտակտն անգլիական և Ֆրանսական դիւտար շտաբների միջև, վոր նախատեսված էր դեռևս 1936 թ. մարտի 19-ի անգլո-Ֆրանսական համաձայնութեամբ: վերջինս կնքից Հոենոսյան դոտին Գերմանիայի կողմից վերամէլիտարիզացիայի յենթարկ-վելու կապակցութեամբ: Բացի դրանից, Անգլիան խոստացավ վորոշ վարկեր արամադրել Ֆրանսիային՝ հումք դնելու և Ֆրանսական ամիացիան ուժեղացնելու համար:

Այդ խոստումների արժեքն ավելի քան հաւաքերական է: Մինչդեռ իսպանական հարցում Դալարյեյի և Բոննէյի կապիտուլյացիան նորից ցույց է տալիս, վեր Ֆրանսիան ինքնուրույն արտաքին քաղաքականութեան չունի: Այդպիսի դրութեանն անկաակած հեշտացնում է պատերազմի Փաշիստական հրձիգների մայրվրնները և կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ Ֆրանսիայի համար:

### ԱՄՆ-ի «ՉԵՉՈՒՔՈՒՅՅԱՆ» ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒՅՅՈՒՆԸ

Ազբեստրների զավթողական գործունէութեանն իսկական դիմադրութեան չի հանդիպում նաև Ամերիկայի Միացյալ նահանգների կողմից, վորի շահերը տվյալ պատմական ժամանակամիջոցում անտարակույս պահանջում են խաղաղութեան ամրապնդում և կոլեկտիվ անվտանգութեան: Չինաստանում կատարվող ճապոնական ազբեստի եյապես խախտում է ԱՄՆ-ի շահերը, գրկելով ամերիկյան խոշոր բուրժուազիային վաճառահանման խոշոր շուկայից և կապիտալների ներդրման խիստ շահավետ դաշտից: Այդ առանձնապես ցավալին կերպով է զգացվում այժմ, այն բանի կապակցութեամբ, վոր ԱՄՆ-ը մտել է տնտեսական նոր ճգնաժամի շրջան: ճապոնական խմբերի զորք ճրգտում է միաժամանակ խախտել ամերիկյան ազդեցութեանը Լատինական Ամերիկայի յերկրներում, ըստվորում ճապոնիայի հետ այդ ասպարեզում մրցում են Փաշիստական Գերմանիան և Իտալիան:

Մինչդեռ ԱՄՆ-ը շարունակում է հետևել, այսպես կոչված, չեզոքութեան քաղաքականութեան, չնայած յերկրում տեղի ունեցող ուժեղ շարժման՝ ընդդէմ այդ քաղաքականութեան: 1931

թվին, Մանջուրիան ճապոնիայի կողմից զավթվելու ժամանակաշրջանում, ԱՄՆ-ը, ճիշտ է, հակամետ էր անցնել ճապոնիայի խմբերի կողմի կողմից Չինաստանում կատարվող եքսպանսիային ակտիվորեն դիմադրութեան ցույց տալու ուղին: Սրան խաղաղ-բեց Անգլիայի դիրքը, վոր ԱՄՆ-ում առաջ բերեց մեկուսացուղական տրամադրութեաններն նոր ուժեղացում:

Այդպիսով ուրեմն, Անգլիան կրում է պատասխանատվութեան զգալի մասը՝ նաև ազբեստիային չհակառակելու ամերիկյան քաղաքականութեան համար:

Հետագայում Ամերիկայի Միացյալ նահանգները ճապոնիայի զավթողական գործողութեաններն նկատմամբ իրենց քաղաքականութեանը վորոշելիս շարունակ հետ եյին նայում Անգլիային, չթաղցնելով նրա վերաբերմամբ իրենց անվստահութեանը, ասենք, միանգամայն հիմնավոր անվստահութեանը: Այդ յերեան յեկավ «Գասներեքի կոմիտեյում», նմանապես և «իննը տերութեանների պայմանագրի» մասնակիցների Բրյուսէլյան կոնֆերենցիայում: Չինաստանում ճապոնական խմբերի խտրական քաղաքականութեան նոր փուլն անկաակած վորոշ տեղաշարժ առաջ բերեց ամերիկյան քաղաքականութեան մեջ, սակայն շատ թույլ տեղաշարժ: Համենայն դեպս Իսպանիայի նկատմամբ ԱՄՆ-ը փաստորեն դրավում է նույն «չմիջամտելու» դիրքը:

Չինաստանում մղվող ճապոնական պատերազմի վերաբերմամբ նույնպես ԱՄՆ-ը չհակառակելու քաղաքականութեան է կիրառում:

Սա յե յերեք խոշորագույն բուրժուական-դեմոկրատական պետութեանների քաղաքականութեան չափազանց վորբալի բաւլանք: Անգլիան ճգտում է համաձայնութեան դալ Փաշիստական ազբեստրների հետ, ուղղակի նպաստելով պատերազմի բռնկմանը՝ աշխարհի նոր վերաբաժանման համար: Ֆրանսիան փաստորեն գտնվեց Անգլիայից կախյալ վիճակում և դրա հետևանքով անուղղակի կերպով շտապեցնում է այդ պատերազմը, վոր նրան ավելի յե սպառնում, քան վորեիցե այլ պետութեան: Յեւ ԱՄՆ-ը, ամենահզոր կապիտալիստական յերկրներից մեկը, մասամբ իր բուրժուազիայի դասակարգային կուրացվածութեանից, իսկ մասամբ ել ի պատասխան Անգլիայի դավաճանական գործողութեանների, — նույնպես կիրառում է թողտվութեան և աջակցութեան քաղաքականութեան իտալո-գերմանական ինտերվենտների վերաբերմամբ Իսպանիայում և ճապոնական ռազմածրների վերաբերմամբ Չինաստանում:

Այս փաստերը վկայում են այն մասին, Վոր բուրժուական գեմնիքատական պետութունները, և ամենից առաջ, Իհարկե, Մնգլիան, փաստորեն դուրացնում են Փաշխատական պետութունների հանցավոր դիտավորութունները: Չնայած դրան, Իսպանիայի դեմ մղվող իտալո-գերմանական պատերազմը և Չինաստանի դեմ մղվող Ճապոնիայի պատերազմը ծավալվում են բնափ վո՛չ այնպես, ինչպես այդ կուզեյին պատերազմի Փաշխատական հրճիղները, վորոնք չեյին սպասում այդքան հզոր և այն ել որ-այնուր ուժեղացող հակահարված Իսպանիայի և Չինաստանի հերոս ժողովրդի կողմից: Չեխոսլովակիայի վերաբերմամբ գերմանական զավթողական դիտավորութունների և Լիտվայի վերաբերմամբ լեհական պլանների իրադրոժման ճանապարհին նույնպես խոչընդոտներ են ծագում, վոր Փաշխատական զիջատիչները կամ-ակամա ստիպված են հաշվի առնել:

### ԻՍՊԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ՑԱՇԻՋՄԻ ԴԵՄ

Իսպանիայում խռովարարները և ինտերվենտներն արագոնյան ճակատը ճեղքեցին: Այս հանգամանքը լարված պատերազմական իրադրութուն ստեղծեց: Սակայն այդ բարոյալքում առաջ չբերեց հանրապետական բանակում, վորը ստիպված յեղավ նահանջել հակառակորդի խոչոր ուժերի ճնշման հանդեպ: Ընդհակառակը, ճեղքումը զարկ տվեց ամբողջ ժողովրդի ավելի սերտ համախմբմանը հակաֆաշիստական կառավարության շուրջը, վորը լի յե վճռականությամբ՝ շարունակելու կռիվը, մինչև վոր հաղթանակ տանի իսպանական Փաշխտների և իտալո-գերմանական ինտերվենտների դեմ: Նման այն բանին, ինչպես 1936 թվի նոյեմբերին Փաշխտների կողմից Մադրիդը գրավվելու վտանգը նախատեց, վոր հանրապետականները կենտրոնական ճակատում ստեղծեն իսկական կանոնավոր բանակ, վորը կարողացավ վոչ միայն պաշտպանել Մադրիդը, այլև խռովարարներին ու ինտերվենտներին մի շարք խոչոր պարտութուններ պատճառել Գվադալխարի մոտ, Խարամա դետի վրա, Բրունետի մոտ, — այնպես ել այժմ Կատալոնիան մնացած հանրապետական Իսպանիայից կտրելը նոր հախուռն յեռանդ առաջ բերեց հանրապետականների շարքերում, վորոնք կովում են իսպանական ժողովրդի ազատության և անկախության համար:

Ամբողջ ժողովուրդը վոտքի յեյակ ի պաշտպանութուն հանրապետության:

Արհմիութունները հավաքադրման կամայանիա ծավալեցին այս լողունգով.—«Ինչպես և Մադրիդի պաշտպանության հերոսական որերին, բանվորները կզնա՛ն կամավորների գլուխն անցած»:

Ընդհանուր բանվորական միության Կատալոնյան կոմիտեն, վորոշում ընդունեց, վորի մեջ կոչ ե անում 1926, 1927 և 1928 թվականների գորակոչի իր բոլոր անդամներին՝ կամավոր մտնել բանակի շարքերը: Բանվորներն ու ծառայողները միջոցների հանդանակութուն են կազմակերպում ազգային պաշտպանության կարիքների համար:

Հանրապետական քաղաքները բոլոր ուժերն ու ուսուցիչները մորիլիդացիայի յեն յենթարկում սաարերկրյա գավթիչներին և նրանց վարձկաններին հակահարված տալու համար: Բարսելոնայի փողոցներում կամավորների խմբերն ամեն որ ցույց են սարքում «Կատալոնացիներ, զենքի դիմեք» լողունգով:

Սոցիալիստական յերիտասարդության միացյալ միությունն սկսեց ամբողջ յերկրում կամավորների կազմակերպութուններ ստեղծել: Կամավորների այդ կազմակերպութունը լի մեջ ե համախմբում այժմ բազմահազար յերիտասարդ բանվորներ, վորոնք լցվում են ժողովրդական բանակի շարքերը:

Արհմիություններն առանձնացրել են ավելի քան 100 հազար մարդ ամբություններ կառուցելու համար:

Տրանսպորտի բոլոր միջոցները մորիլիդացիայի յեն յենթարկված ճակատի սպասարկման համար:

Կատալոնիայի կանանց միությունը դիմեց Իսպանիայի բոլոր կանանց ու կոչ արեց՝ փոխարինել ուսղմաճակատ մեկնող մարտիկներին, առանձնացնել 100 հազար բանվորուհիներ «Միկունքում աշխատելու և «Հինգերորդ գորասյունի» դեմ պայքարելու համար»: Մադրիդում կանայք արդեն փոխարինել են բանվորների և ծառայողների զգալի մասին, նրանք աշխատում են վոչ միայն Հիվանդանոցներում, այլև ուղմական արդյունարության մեջ, տրանսպորտում և այլն:

Իսպանիայում ժողովրդական ճակատի ամբացումն արտահայտվեց Նեդրինի կառավարության վերակազմումով, վորի մեջ մտան արհմիութենական խոչորագույն կենտրոնները—Ընդհանուր բանվորական միության (2 միլիոն անդամ) և Աշխատանքի ազգային կոնֆեդերացիայի (1,2 միլիոն անդամ) ներկայացուցիչները, վորոնք մինչև այդ չեյին մտնում կառավարության կազմի մեջ: Դրա հետևանքով իսպանական կառավարությունն այժմ

ազգային միասնութեան իսկական կառավարութիւնն և հանդիսանում:

Կառավարութեան վերակազմութեան հետևանքով կառավարական ասպրատից հեռացվեցին այն մարդիկ, վորոնք փորձում էին շարունակել մենչեիկ Լարզո Կարալեբոյի արադիցիաները, վորը խոչընդոտ եր հանդիսանում հանրապետական բանակի մարտունակութիւնն ամրապնդելուն վերաբերող մի շարք ձեռնարկումների, մասնավորապէս նրա շարքերը տրոցկիստական դավաճաններից ու մատնիչներից և այլ թշնամիներից մաքրելուն վերաբերող ձեռնարկումների իրադրմամբ:

Իսպանական կառավարութեան վերակազմումը նպաստավոր պայմաններ ստեղծեց քաղաքական աշխատանքը բանակում ուժեղացնելու համար, մի աշխատանք, վոր ել ավելի յե համախորձում մարտիկներին և նրանց վստահութիւնն ներշնչում հաղթանակի վերաբերմամբ:

Կատալոնիայի և Իսպանիայի մյուս մարզերի արտադրական բազան ճիշտ և հմուտ կերպով ոգտագործվելու դեպքում հանրապետական բանակը, վորի շարքերն են այժմ լցվում նոր հարյուր-հազարավոր կամավորներ, — ամենակարճ ժամկետում կկարողանա մատակարարվել ժամանակակից սպառազինումների բոլոր տեսակներով և այնպիսի քանակութեամբ, վորը բավական կլինի ընդհանուր հուժկու հարձակման անցնելու համար:

Իսպանական պանծալի կոմունիստական կուսակցութեան աճող ազդեցութիւնը տրամաբանական հետևանք է այն փաստի, վոր Իսպանիայում տեղի ունեցող պայքարի ամբողջ ժամանակամիջոցում կոմունիստական կուսակցութիւնը ժողովրդին ցույց է տվել հաղթութեան ճիշտ ճանապարհը: Բավական է հիշեցնել, վոր կոմունիստական կուսակցութիւնը կոչ եր անում կանոնավոր, տեխնիկապէս հաշեցված բանակ ստեղծել դեռ այն ժամանակ, յերբ Իսպանական մի շարք կուսակցութիւնների և դործիչների թվում եր, թե կարելի յե առանց այդպիսի բանակի ել ապահովել դեմոկրատիայի հաղթութիւնը: Կոմկուսը չսահմանափակվեց կանոնավոր բանակ կազմակերպելու կոչ անելով, — նոս ստեղծեց հոչակավոր Ծ-րդ գունդը, վորը վոչ միայն զորամաս է, այլև իսկական ռազմական դպրոց: Ծ-րդ գունդը հանրապետական բանակին հանձնեց ավելի քան 70 հազար մարտիկներ ու հրամանատարներ:

Կոմունիստական կուսակցութեան ճնշող մեծամասնութիւնը կուլում է հանրապետական բանակի շարքերում, 1936 թ. ահալոր

նոյեմբերյան որերին կոմկուսի Մարքիշի կազմակերպութիւնից, վորն այն ժամանակ ունեւ 23 հազար անդամ, 21 հազար հոգի մեկնեց ռազմաճակատ: Բանակի շարքերը լցվեցին հաղարավոր կոմյերիտականներ:

Կոմկուսը ռազմա-Փաշիստական խռովութեան առաջին իսկ որերից պահանջում եր անխնա ջախջախել տրոցկիստական-Փաշիստական կազմակերպութիւնները, ցույց տալով, վոր այդ կազմակերպութիւնները խռովարարներն «հինգերորդ զորասյունն» հիմնական ջոկատն են հանդիսանում: Մինչդեռ Իսպանիայի ժողովրդական ճակատի կողմնակիցներից շատերն այն ժամանակ դեռևս չէին նկատել ПОУМ-ում դերմանո-խտալական Փաշիզմի գործակալներին:

Կոմկուսը միշտ պնդում եր ստեղծել հզոր ռազմական արդիւնաբերութիւն, վորն ընդունակ լինի ապահովել հանրապետական բանակին նրան անհրաժեշտ արդիական սպառազինութեամբ: Այնինչ ժողովրդական ճակատի մյուս կուսակցութիւնները յերկար ժամանակ իրենց բոլոր հույսերը դնում էին այն բանի վրա, վոր բուրժուական-դեմոկրատական պետութիւնները հրաժարվեն «չմիջամտելու» քաղաքականութիւնից:

Կոմկուսը նվաճել է անվիճարկելի հեղինակութիւն, Իսպանիայի ժողովրդական մասսաների ջերմադին սերը և լիակատար յերախտադիտութիւնը: Կոմկուսի ազդեցութիւնը վորոշվում է նաև նրանով, վոր կոմունիստները միշտ գտնվում են պայքարի առաջավոր դիրքերում, վոր նրանք հակաՓաշիստ մարտիկներին անվահերութեան և հանուն ժողովրդի շահերի անձնագոհութեան պատրաստակամութեան որինակ են ցույց տալիս:

## ԴՐՈՒՅՅՈՒՆԸ՝ ՉԵՒՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՍ

Գերմանական Փաշիզմը, Այստրիան դավթելով, անտարակույս մտադրվում է շտապեցնել Չեխոսլովակիայի վրա կատարելիք հարձակման ժամկետները: Այս մասին է վկայում Հենրեյնի քայքայիչ գործունեյութեան արտասովոր ուժեղացումը, Հենրեյնի, վորը Սուդետյան մարզում նախապատրաստում է խռովութիւն՝ նման Իսպանական Մարտիկոյում Ֆրանկոյի բարձրացրած խռովութեան:

Չեխոսլովակիայում այժմ տեղի յե ունենում Փաշիստական ռեակցիայի ուժերի յուրատեսակ մի մոբիլիզացիա: Գերմանիայի ճնշման ներքո գերմանական ազրարային կուսակցութիւնը

դուրս յեկալ կառավարական կոալիցիայի կազմից և միաձուլ-  
վեց Հենրէյնի Փաշխատական կուսակցութեան հետ: Նրա որինա-  
կին հետեւեց արհեստավորներէ և առևտրականներէ զերմանական  
կուսակցութեանը: Միաժամանակ ուժեղանում է ճնշումը նաև  
չեխական ագրարականներէ և սլավոնական կլերիկալներէ  
խմբի վրա: Այս բոլոր մանյովներէ նպատակն է՝ վախեցնել  
Չեխոսլովակիայի գեմոկրատական ուժերին, ստիպել նրանց պնձ-  
նատուր լինել Փաշիզմի հանդէս և դրանով իսկ հիտլերյան Գեր-  
մանիայի համար սլավոնացնել նրա գաղթողական սլաններէ իրա-  
զործումը: Այդ նպատակով ուժեղացրած տեմպով ծավալվում  
է հիտլերյան զործակալներէ քայքայիչ գործունէութեանը,  
վորը քողարկվում է Սուդետա-գերմանական մարզին ավտոնո-  
միա տալու պահանջով:

Իրա հետ միաժամանակ Հիտլերը ռազմական ուսուցումներէ  
անվան տակ Չեխոսլովակիայի սահմանի վրա գործառնէ և  
կենտրոնացնում: Անգլիական «Իմֆինդ Ստանդարդ» լրագրի հա-  
ղորդագրութեամբ Գերմանիան իր հարձակումը Չեխոսլովակիայի  
վրա՝ հարմարեցնում է այն մոմենտին, յերբ Սուդետյան մար-  
զում կվերջանան մունիցիպալ ընտրութեանները: Հենչէյնը  
մտադիր է, այդ ընտրութեաններէ արդյունքները հայտարար-  
վելուց հետո, իրեն հուշակել Սուդետյան մարզի «Փյուրեր» և  
մոնիչացնել սահմանն այդ մարզի ու Գերմանիայի միջև: Այդ  
սլոգանակալի չեխոսլովակյան կառավարութեան կողմից դե-  
մադրութեան ցույց տալը հիտլերյան Գերմանիան համարելու  
յէ վորպես առիթ՝ Չեխոսլովակիա դիմում ներխուժելու համար:

Սակայն գերմանական Փաշիզմը այնուամենայնիվ ստիպված  
է հաշիւ առնել լուրջ պաշտպանունակութեանը Չեխոսլովակյան  
հանրապետութեան, վորն ունի հզոր արդյունաբերութեան, այդ-  
թիվում նաև ռազմական արդյունաբերութեան, ունի հումքային  
և պարենային զգալի օբսուրսներ և, վերջապես, ուժեղ, մար-  
տունակ, տոկոն ու լավ զինված բանակ: Թեպետ Չեխոսլովա-  
կիան համեմատաբար փոքր պետութեան է, բայց նա ի վիճակի  
յէ դուրս բերելու մեկուկես միլիոնանոց բանակ:

Գերմանական զորքերը Չեխոսլովակիային սահմանակից գեր-  
մանական շրջաններում կենտրոնացվելու կապակցութեամբ չե-  
խոսլովակյան կառավարութեանը հարկադրված յեղալ վորոշ  
նախազգուշական միջոցներ ձեռք առնել: Հանրապետութեան  
պահպանութեան որենքի հիման վրա կառավարութեանը

1938 թ. մայիսի 20-ին բանակի շարքերը կանչեց պահեստի մեկ  
տարին և մորիլիզացիայի յենթարկեց բեռնատար տրանսպորտը:  
Միաժամանակ դեպի գերմանական սահմանը և Սուդետա-գեր-  
մանական մարզն ուղարկվեցին զորամասեր, վորոնք պատրաստ  
են դիմադրութեան ցույց տալու թշնամուն:

Մայիսի 21-ին հանդես գալով մամուլի ներկայացուցիչներէ  
առջև, չեխոսլովակյան կառավարութեան վարչապետ Գոլջան,  
մատնանշելով Չեխոսլովակիայի միջազգային դրութեան լրջու-  
թեանը և այն, վոր սկսվում է պայքարի ու ծանր մարտերի  
կարիսան, հայտարարեց.

«Այդ նշանակում է, վոր մեր ժողովուրդը պետք է պատ-  
րաստ լինի կռիվու. մենք պաշտպանվելու յենք ինչպիսի պայ-  
մաններում էլ լինի»:

Չեխոսլովակյան կառավարութեան բունաձ գիրքն արտացո-  
լում է չեխոսլովակյան ժողովուրդի կամքը, նրա պատրաստակա-  
մութեանը՝ պաշտպանելու իր անկախութեանն ու ազատու-  
թեանը: Դեմոկրատական Չեխոսլովակիան լի յէ մճուկանու-  
թեամբ պայքարելու, չնայած կառավարական կոալիցիայի մեջ  
մտնող առանձին բուրժուական կուսակցութեաններէ տասա-  
նուններին և մեկ-մեկ ավելորդ գիջողութեան:

Անգլիայի կառավարութեան ճնշմանը դիջելով՝ Փրանսական  
կառավարութեանը շատ բան արեց նրա համար, վորպեսզի Չե-  
խոսլովակիային տրամադրի գիջումներ անելու գերմանական  
Փաշիզմին, որյեկտիվորեն դրանով գեմորիլիզացիայի յենթարկե-  
լով Չեխոսլովակիային: Բայց Փրանսական կառավարութեանը  
շարունակում է ընդգծել իր հավատարմութեանը Փրանս-չեխա-  
կան դաշնակցային պայմանագրի պարտավորութեաններին, հա-  
վատարմութեան, վորն իրոք թելադրում են բուն իսկ Փրանսիա-  
յի շահերը:

Չեխոսլովակիան ԽՍՀՄ հետ կնքել է ագրեսորի դեմ փո-  
խադարձ օգնութեան պայմանագիր, վոր նախատեսում է օգ-  
նութեան ԽՍՀՄ կողմից Չեխոսլովակիային այն դեպքում,  
յէթէ այդպիսին ցույց կտրվի նաև Փրանսիայի կողմից:

Հենց այդ պատճառով գերմանական Փաշիզմը պատերազմի  
պատրաստութեաններ տեսնելու հետ մեկտեղ, վորոնց մասին  
մենք վերելում խոսեցինք, այժմ տենդազին ջանքեր է գործա-  
դրում, վորպեսզի ներքուստ պայթեցնի Չեխոսլովակիան: Գեր-  
մանիան հաշիվում է, վոր յէթէ Չեխոսլովակիայի գաղթումն  
իրագործվի ներքին խռովութեան միջոցով, ապա ուրեմն գեր-

մանական Փաշիգմի դործակալությանը Յրանսիայում կհաջողվի Ֆրանսական կառավարութայնը հետ պահել իր դաշնակցային պարտավորությունները կատարելուց:

Փաշիստական օեթիմի ձգտող օեակցիոն Ֆրանսական շըր-Վանները, վորոնք պատրաստ են անձնատուր լինել Գերմանիայի հանդեպ, առանձնապես սիրահոծար կերպով, հարկավ, կզոհե-յին Չեխոսլովակիայի շահերը: Բայց ժողովրդական ճակատի կուսակցությունները և բոլոր ազնիվ Ֆրանսացիներն իրենց հա-շիվ են տալիս այն բանում, վոր Չեխոսլովակիային հիտլերյան Գերմանիայի հետ ղեմառղեմ թողնելը հավասարազոր է դավա-ճանության բուն իսկ Յրանսիայի շահերի վերաբերմամբ: Այդ-պիսի դավաճանությունը վոչ միայն չէր հեռացնի, այլ, ընդհա-կառակը, կմոտեցներ Գերմանիայի հարձակումն իր «յաղմի» թշնամու վրա: Հենց այդ պատճառով Յրանսիայի և Չեխոսլո-վակիայի ժողովրդական մասսաներն այժմ պահանջում են վոչ միայն այն, վոր Ֆրանսական կառավարությունը հաստատի իր հավատարմությունը Յրանս-Չեխոսլովակյան դաշնակցային պայ-մանագրով հանձն առած պարտավորությունները, այլև այն, վոր Ֆրանսական ու չեխոսլովակյան կառավարությունները վճռեն, վերջապես, պայքար մղել ղերմանական Փաշիգմի կող-մից Չեխոսլովակիայում և Յրանսիայում կատարվող քայքայելի դործունեյության դեմ: Վորքան ավելի շուտ գիտակցեն այդ պե-տությունների կառավարող շըջանները, վոր Փաշիգմն ուժեղ է միայն այնտեղ, վորտեղ նա ղիմադրության չի հանդիպում, — այնքան ավելի հեշտ կլինի ապահովել ազրեսիայի դեմ մղվող պայքարի յեվրոպական ճակատի նաև չեխոսլովակյան տեղամասի անվտանգությունը:

## ԼԵՀԱՍՏԱՆ ՅԵՎ ԼԻՏՎԱ

Լեհ-լիտվական կոնֆլիկտի զարգացումը խիստ ուսանելի յե: Մենք արղեն նշեցինք, վոր Լեհաստանի կողմից լիտվական կառավարութայնը ուլտիմատում ներկայացնելը, վորի մեջ պա-հանջ էր ղրված վերականգնել ղիվանաղիտական հարաբերու-թյունները, նպատակ ուներ պայմաններ ստեղծելու, վորպեսղի լեհական զորքերը ներխուժեն Լիտվա: Լիտվային ուլտիմատում ներկայացնելու մոմենտին Լիտվայի սահմանի վրա արղեն կեն-տրոնացված էր 50-հազարանոց բանակ:

Լիտվական կառավարությունն իրեն շատ լավ հաշիվ էր

տալիս, թե ինչ է նշանակում այդ պրովոկացիան, և համաձայ-նեց վերականգնել ղիվանաղիտական հարաբերությունները, ընդ-ամին ընդձեյով, վոր ինքը ղիջում է միայն կոպիտ ուժին: Միաժամանակ լիտվական կառավարությունը միջոցներ ձեռք առավ յերկրի պաշտպանունակությունն ամբացնելու համար: Բե-կի հաշիվները, այդպիսով, անհաջողության մատնվեցին: Սակայն, կասկածից վեր է, վոր Լեհաստանի համար այնքան էլ ղժվար չէր լինի Լիտվայի կողմից լեհական ուլտիմատումն ընդունվելուց հետո էլ ընդարձակել կոնֆլիկտի շըջանակները և նոր առիթ ստեղծել լիտվական կառավարութայն վրա ուղղակի հարձակում գործելու համար:

Յրանսական «Պոպյուլեր» լրագիրը 1938 թ. մարտի 25-ի համարում, հենվելով արժանահավատ տեղեկությունների առ-կայության վրա, գրում էր, վոր «Որհնրդային Միությունը, բարեհաճ վերաբերմունք ցույց տալով Լեհաստանի ու Լիտվայի միջև նորմալ ղիվանաղիտական հարաբերությունների վերա-կանգնմանը, միևնույն ժամանակ տեղեկացրեց Մոսկվայի լեհա-կան ղեսպանին, վոր Որհնրդային Միությունը Լեհաստանին խորհուրդ է տալիս ուժի չղիմել և իրեն վերապահում է գոր-ծողությունների ազատություն՝ Լիտվայի վրա ղիմված հարձա-կում կատարվելու դեպղում: Այդ հայտարարությունը և այդ վերապահությունն իրենց դերը կատարեցին...»:

Նկատի ունենալով լեհական քաղաքականութայն ավան-տյուրիստական բնույթը, մի քաղաքականություն, վորը վորոշ-վում է վո՛չ այնքան Վարչավայում, վորքան Բեռլինում, չի կա-րելի, իհարկե, բացառել Լիտվայի վրա լեհական հարձակումը կրկնվելու հնարավորությունը: Ուստի միանգամայն ակներև է, վոր Լեհաստանի ու Լիտվայի փոխհարաբերություններին հար-կավոր է առաջվա պես լարվածությամբ հետևել:

## ՉԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Չինաստանում դեպղերը զարղանում են վոչ այնպես, ինչ-պես այդ իրենց պատկերացում էլին ճապոնական ուղմամուլ-ները: Յերը 1937 թ. հուլիսին սկսվեց չինական ժողովրդի դեմ մղվող՝ ճապոնիայի գավթողական պատերաղմի նոր փուլը, ճապոնական իմպերիալիստները պնղում էլին, թե իրը Չինաս-տանը չի ղիմանա նույնիսկ յերկու ամսվա պատերաղմի: Այն ժամանակվանից անցել է արղեն ավելի քան 10 ամիս, իսկ Չի-

նաստանի ղեկավարութիւնը վոչ միայն չի թուլացել, այլ, ընդհակառակը, ուժեղանում է որքստորե:

Դեպքերն այդ ուղղութեամբ զարգանալու հիմնական գործնականորէն հանդիսացաւ չինական ժողովրդի բոլոր ուժերի միասնորումը ճապոնական զավթիչներէ դեմ մղվող պայքարում: Չինաստանում հակաճապոնական ճակատի ստեղծումը չինական կոմունիստական կուսակցութեան և գոմինդանի միջև կնքված համաձայնութեան հիման վրա՝ թույլ տվեց Չինաստանում միասնական ազգային բանակ կազմակերպել չինական բաժան-բաժան գործերից: Այդ բանակի կազմի մեջ մտան նաև չինական պանծալի Կարմիր Բանակի գործառնները, վորը ներկայումս Չինաստանի Տրդ ժողովրդական-հեղափոխական բանակն է ներկայացնում:

Տրդ ժողովրդական-հեղափոխական բանակը հակառակորդի հետ առաջին իսկ հանդիպման դեպքում՝ 1937 թ. սեպտեմբերին կարողացաւ լուրջ պարտութեան մատնել նրան: Պինինկուանի շրջանում Իտազակիի ճապոնական ղեկիղիւղի հետ բռնված կատաղի ճակատամարտում Տրդ բանակը վոչնչացրեց այդ ղեկիղիւղի ամբողջ մի բրիգադ և բռնեց մինչև 2 հազար զերի: Ճապոնական հրամանատարութիւնն այն ժամանակ առաջին անգամն էր, վոր հանդիպեց լուրջ հակառակորդի: Որքստորե ուժեղանում է ժողովրդական-հեղափոխական բանակի նաև մյուս գործառնների մարտունակութիւնը, լաւանում է նրանց սպառազինումը: Իրան ուղեկցում է չինական ավիացիայի քունակական և վորպկական աճումը: Յերբ չինական ուժակոծիչները Ֆորմոզա կղզու վրա հարձակվեցին, նրանք ճապոնական Յնինքնաթիւ վոչնչացրին: Ընդհանուր առմամբ Ճապոնիան արդեն Չինաստանում կորցրել է ավելի քան 600 ինքնաթիւ:

Չինաստանի ժողովրդական-հեղափոխական բանակը տեխնիկական սպառազինման տեսակետից դեռևս հետ է ճապոնական բանակից, բայց նա արդեն այժմ ի վիճակի յե ճապոնական բանակին ավելի ու ավելի ուժեղ հարվածներ հասցնել, հմտորեն մանևրել և ղեկորական մասերի գործողութիւնները հակառակորդի թիկունքում կատարվող պարտիզանական յելույթներէ հետ գուգորդելու միջոցով: Վերջին ամիսների ընթացքում չինական բանակը մի շարք խոշոր հաղթութիւններ տարավ ինչպես հյուսիսային, այնպես էլ կենտրոնական ուղղակաւում, Ճապոնիային պարզորոշ զգալ տալով չինական բանակի աճած հզորութիւնը: Առանձնապէս լուրջ պարտութիւն կրեցին ճա-

պոնական գործերը Տայերչուանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Չինական բանակն այժմ որինակ է ցույց տալիս այն բանի, թե ինչպիսի հերոսութեամբ և հաղթականորէն կարող է կուլել մի ժողովուրդ, վորը պայքարում է ազատութեան և անկախութեան համար, ընդդեմ ոտարերկրյա բնակալների:

Պատերազմը, վոր արդեն 10 ամիս ալել է, ինչ շարունակում է, հիմնալորապէս խախտել է ճապոնական եկոնոմիկան:

Պատերազմը շարունակում է արյուննքամ անել ճապոնական բանակը, վորը կորցրել է Լյուկոսցոյաոյում տեղի ունեցած միջազեպի որից հաշված ավելի քան 300 հազար մարդ, ըստվորում ճապոնական բանակի թիւը Չինաստանում կազմում էր 1 միլիոնից էլ ավելի:

Ճապոնական իմպերիալիզմի այն փորձերը, վորոնց նպատակն էր՝ չինական տրոցկիստական-Փաչիստական դավաճաններէ ու մարդասպանների ոգնութեամբ պայթեցնել չին ժողովրդի միասնութիւնը, վորն ստեղծվել է Չինաստանի կոմունիստական կուսակցութեան հերոսական ջանքերով, նույնպիսի խորտակման յենթարկվեցին, ինչպես և Չինաստանի ուղղական ջախջախման փորձերը:

Ունեցած տեղեկութիւնները վկայում են այն մասին, վոր ճապոնական ուղղամոլները մտահոգված են այժմ Չինաստանում ծագած ինչպէս ուղղական, այնպէս էլ քաղաքական իրողութեամբ: Բայց ճապոնիան բնավ չի մտածում, իհարկէ, հրաժարվել ազրեսիան շարունակելուց: Ճապոնական ուղղամոլներն էլ ավելի կատաղութեամբ ու դաժանութեամբ կործանում են չինական քաղաքները, սպանում և հաշմանդամ են դարձնում խաղաղ բնակչութեանը:

Չափն անցկացրած ճապոնական իմպերիալիստները դառնապէս ցավում են, վոր գոյութիւն չունի համաձայնութիւն չինական գործերին «չմիջամտելու» մասին, վորը, Իսպանիայի որինակով, նրանց համար կհետապնէր Չինաստանի բրկազան և կըժպարացներ անհրաժեշտ սպառազինութեան ներմուծումը:

Չինաստանում կատարվող ճապոնական ազրեսիայի զարգացումը դրդում է չին ժողովրդին այսուհետե էլ ամբապնդել հակաճապոնական ժողովրդական-հեղափոխական բանակը, հրակայական մասշտաբներով պարտիզանական շարժում ծափալելով ճապոնական ազրեսորներէ դեմ, նորանոր մասսաներ ներդրա-

վերով ձապոնիայի դեմ մղվող պայքարի միասնական ազգային ճակատը: Այս խնդիրների իրագործումը չինական ժողովրդին հնարավորութուն կտա ջանջախելու ճապոնական զավթիչների բանակները:

Խորհրդային Միության ժողովուրդները սեեռուն ուշադրությամբ և մեծագույն համակրանքով հետևում են չինական ժողովրդի պայքարի զարգացմանը:

## ԱԳՐԵՍՈՐՆԵՐԻ ԲԼՈՎԻՆ ԴԻՍԱԿԱՅՈՒՄ Ե ԽԱՂԱՂՈՒՅՅԱՆ ԲԼՈՎ

Իսպանական ժողովրդի հերոսական պայքարն ընդդեմ ֆաշիզմի և չինական ժողովրդի՝ ազգային-ազատագրական պայքարն ընդդեմ ճապոնական խմբերիայիզմի՝ վիպյում է, վոր հսկայական չափով աճել է ժողովրդական մասսաների կողմից Ֆաշիստ ազրեսորներին ցույց տրվող դիմադրությունը: Իսպանիայի և Չինաստանի ժողովուրդները գտնվում են կրակի առաջավոր դժերի վրա, դեմոկրատիայի ու պրոգրեսի համար մարտնչողների ավանգարդում՝ ընդդեմ ֆաշիզմի ու պատերազմի:

Ժողովրդական մասսաները մյուս յերկրներում ևս բարձրացնում են իրենց ձայնը, պահանջելով վերջ տալ ազրեսորների վերաբերմամբ թողտվություն և աջակցություն ցույց տալու, մանավանդ նրանց հետ համաձայնության գալու այն ամթայի քաղաքականությանը, վոր կիրառում են բուրժուական-դեմոկրատական պետությունների ուսակցիոն շրջանները:

Ընդ. Դիմիտրովը «Залог победы» բրոշյուրում գրում է.

«Մակերեսային դիտողը նկատում է ծավալվող դեպրերի մի կողմը՝ Ֆաշիստ ազրեսորների հարձակումը, մյուս յերկրների բուրժուակիայի Ֆաշիստամոլ խմբերի խոնարհումն ազրեսորների առջև, Ֆաշիստական մամուլի ազմուկն ու ծնծղադարկերը: Սակայն իրականում դոյություն ունի այդ դեպրերի նաև մյուս կողմը.—աճում է բանվոր դասակարգի շարժումն ընդդեմ ֆաշիզմի ու պատերազմի, ամրապնդվում է աշխատավոր մասսաների վրդովմունքն ընդդեմ թողտվության քաղաքականության, շարժվում են այն ժողովուրդները, վորոնց սպառնում է Ֆաշիստական ազրեսիան, տեղի յե ունենում հակաֆաշիստական ուժերի համախմբում առանձին յերկրներում և միջազգային մասշտաբով:

Այդպիսով, տեղի յե ունենում յերկու հակադիր պրոցես միջազգային դեպրերի զարգացման մեջ: Մինչդեռ բուրժուական դեմոկրատիայի յերկրների ուսակցիոն կապիտալիստական վերնախմբն ավելի ու ավելի կողմորդվում է գործարք կնքելու Ֆաշիստական ազրեսորների հետ և Ֆաշիստամոլական քաղաքականություն վարելու իր յերկրում, ամբողջ աշխարիում աճում են պատերազմի ու ֆաշիզմի դեմ պայքարող ուժերը»<sup>1</sup>:

Ֆաշիզմի դեմ և դեկալարող դասակարգերի կործանարար քաղաքականության դեմ ուղղված շարժումը մեծ ծավալ է ստացել Պրանսիայում, վորտեղ բնակչության ամենալայն մասսաները համախմբվել են ֆաշիզմի ու պատերազմի դեմ ուղղված պայքարի ժողովրդական ճակատում:

Անգլիայում աճում է բողոքի շարժումը հիտլերյան Գերմանիայի, Ֆաշիստական Իտալիայի և ճապոնական ոսգմամորների հետ համաձայնության գալու քաղաքականության դեմ, հակառակ լեյբորիստական կուսակցության և տրեդ-յունիոնների դեկալարության, մասնավորապես Միտրինի և նրա կլիկի դավաճանական քաղաքականության, վորոնք վորճում են վիժեցնել անգլիական ժողովրդական մասսաների միասնությունը:

Լեյբորիստական կուսակցության և արհմիությունների մի շարք կազմակերպություններ հանդես են գալիս ուսակցիոն ուժերի հետ հակաֆաշիստական դեկալարության դեմ, պնդելով, վոր կառավարության հանդեպ ոպողեցիոն կուսակցությունները և ընկերությունները վո՛չ թե խոսքով, այլ գործով կանգնեն ազրեսորների հետ համաձայնության գալու բրիտանական քաղաքականության դեմ պայքարելու ուղու վրա:

Փետրվարի վերջին Անգլիայում կազմակերպվեցին ավելի քան 500 բանվորական միախնդներ և բողոքի ցույցեր պահպանողականների քաղաքականության դեմ: Այդ ցույցերից մեկին, վորը տեղի ունեցավ «Փրիենք Իսպանիան, փրկենք խաղաղությունը» լողունգով, մասնակցում էր 120 հազար մարդ:

Ապրիլի կեսին Բրայտոնում կայացած՝ կոոպերատիվ կուսակցության կոնֆերենցիան, վորտեղ ներկայացված էլին նրա 5,250 հազար անդամները, պահանջվեց Չեմբերլենի կառավարության հրաժարականը՝ վորպես առաջին քայլը Անգլիայում ֆաշիզմի ու ազրեսիայի դեմ պայքարի ժողովրդական ճակատ ստեղծելու

<sup>1</sup> Դիմիտրով, «Залог победы», էջ 6, Բողոքատ, 1938 թ.:

համար և վորպես համաշխարհային կատաստրոֆայից խուսա-  
փելու միակ միջոցը: Բողոքի այդ շարժման մեջ են ներգրավ-  
վում ուր-ալուր բնակչության ավելի ու ավելի լայն խավերը:

Յեւ անգլիական բուրժուական լազերում քիչ չէ Չեմբերլե-  
նի քաղաքականության հակառակորդները թիվը, մի քաղաքա-  
կանություն, վորը թուլացնում է Անգլիայի միջազգային դիրքե-  
րը և շտապեցնում է պատերազմը աշխարհի նոր վերաբաժանման  
համար: Անգլիական ղեկավարող շրջանների առաջիկ լուրջ ներ-  
կայացուցիչներն իրենց հաշիվ են տալիս այն բանում, վոր այդ  
քաղաքականության շարունակումը կարող է միայն արագացնել  
բրիտանական կայսրության քայքայումը և բրիտանական իմպե-  
րիալիզմի խորտակումը: Միայն սրանով է բացատրվում այն, վոր  
այնպիսի վորձված մի քաղաքագետ, վորպիսին լիբերալների ա-  
ռաջնորդ Լյուդ-Ջորջն է, այժմ պահանջում է խափանել Իոպա-  
նիայում կատարվող իտալո-գերմանական ինտերվենցիան և հրա-  
ժարվել Գերմանիայի ու Իտալիայի հետ խոսքը մեկ անելու քա-  
ղաքականությունից, վորոնց ազրեսիվ տեսչանքներն անմիջակա-  
նորեն շոշափում են բրիտանական իմպերիալիզմի շահերը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովրդական լայն մաս-  
սաներն ուրստորե ավելի ու ավելի վճռականորեն բարձրացնում  
են իրենց ձայնը չեզոքություն քաղաքականությունը վերջ տալու  
ուղտին, այն քաղաքականությունը, վորը ձեռնտու չէ միայն ազ-  
րեսիվ պետություններին և հակասում է հենց ՍՄՆ-ի ճիշտ  
հասկացված շահերին: Միացյալ Նահանգներում արտազրական  
արհմիությունները կոմիտեյի կազմավորումը, վորը կանգնած է  
դասակարգային կռիվի դիրքերում և արդեն այժմ միավորում է  
4 միլիոն արտադրական բանվորներ, կոմիտեյի թվի և ազդեցու-  
թյան լուրջ աճումը, դեմոկրատական հակաֆաշիստական շարժ-  
ման ուժեղացումը նպաստավոր նախադրյալներ են ստեղծում՝  
ՍՄՆ-ում ֆաշիզմի և պատերազմի դեմ պայքարի դեմոկրատա-  
կան ճակատ կազմելու համար:

Յեւրոպայի փոքր յերկրներում, Լատինական Ամերիկայի յեր-  
կրներում—ամենուրեք այժմ նկատվում է ժողովրդական մասսա-  
ների շարժման վերելք՝ հանուն միասնական հակաֆաշիստական  
ճակատի: Սրա հետ մեկտեղ ուժեղանում է նաև ազգային-ազա-  
տագրական շարժումը գաղութային յերկրներում:

Սորհրդային Միությունը, վորն ամբողջ առաջավոր և սրո-  
գրեսիվ մարդկությունը ցույց է տալիս կապիտալիստական սուրբ-  
կությունից ու ֆաշիստական բարբարոսությունից ազատագրվե-

լու ուղին, վորդեպում է բոլոր յերկրների ժողովրդական մաս-  
սաներին ուժեղացնելու պայքարը ֆաշիզմի դեմ, նմանապես և  
թուլությունյան ու ազրեսությունների հետ համաձայնությունյան գալու-  
քաղաքականությունյան դեմ: Սորհրդային Միությունյան հզորու-  
թյունը, վորն իր իտալադասերական քաղաքականությունն իրադրոժե-  
լիս հենվում է ստալինյան հեղամյակների հետեանքով ստեղծ-  
ված իր հզոր արդյունաբերությունյան վրա, առաջավոր սոցիալիս-  
տական դյուդատնտեսությունյան վրա, առաջադիմող տրանսպորտի  
վրա, մեր յերկրի անսպառելի բնական հարստությունների վրա,  
իր փառապանծ, անսպարտելի Կարմիր Բանակի և Կարմիր Նավա-  
տորմի վրա, ծառայում է վորպես կարեորագույն մի գործոն,  
վորը խոչընդոտ է հանդիսանում ֆաշիստական ազրեսիայի ու-  
ժերի բացարձակմանը:

Բայց աշխարհի նոր վերաբաժանման պատերազմի վտանգը  
շարունակում է գոյություն ունենալ և ամեն ժամ, ամեն րոպե  
հիշեցնում է իր մասին: Չի թուլացել նաև ազրեսությունների՝  
ԽՍՀՄ վրա հարձակվելու վտանգը, վորի նպատակն է լինելու՝  
պոկել, հափշտակել խորհրդային տերիտորիաները և կապիտա-  
լիզմը վերահաստատել մեր յերկրում:

Պետք է նկատի ունենալ, վոր ընդհանուր կապիտալիստական  
հակասությունների սրումը և, մասնավորապես, համաշխարհային  
տնտեսական նոր ճգնաժամի մոտեցումը դրդում է ֆաշիստ ազ-  
րեսություններին շտապեցնել իրենց գիշատչական դիտավորություն-  
ների իրադրոժումը: Միանգամայն ակներև է, վոր ճգնաժամն  
առաջ կրերի կապիտալիստական եկոնոմիկայի հետագա անկում  
և ժողովրդական մասսաների հեղափոխական շարժման վերելք,  
այն մասսաների, վորոնք պայքարում են կապիտալիստական հա-  
սարակակարգի և նրա դերիշխանությունյան ամենից ավելի դազա-  
նային ձևի—ֆաշիզմի տապալման համար:

Նաև վոչ-ֆաշիստական կապիտալիստական յերկրներում  
նկատվող ներքին քաղաքական դրությունյան խիստ սրվելը, թեպետև  
պակաս սուր ձևերով, տնտեսական ճգնաժամի մոտեցումը, վո-  
րի հետեանքները կարել է և՛լ ավելի ահավոր լինել, քան 1929—  
1933 թ. թ. ճգնաժամի հետեանքները, առանձնապես ուժեղ  
կերպով է անգրադատնում ԽՍՀՄ վերաբերմամբ ավանտյու-  
րիստական արամադրությունների ուժեղացման վրա:

Ընկեր Ստալինը դեռևս Համկ(բ)ի XVI համագումարում  
նախազգուշացնում էր մեզ այն մասին, վոր



«...ամեն անգամ, յերբ սկսում ե սրվել կապիտալիստական հակասությունները, բուրժուազիան իր հայացքը դարձնում ե ԽՍՀՄ կողմը. արդյոք չի՞ կարելի այս կամ այն հակասությունը, կամ բոլոր հակասությունները միասին վերցրած՝ լուծել ի հաշիվ ԽՍՀՄ, Խորհուրդների այս յերկրի, հեղափոխության միջնաբերդի, վորն իր սոսկական գոյությամբ հեղափոխականացնում ե բանվոր դասակարգին ու գաղութները, վորը խանդարում ե նոր պատերազմ գլուխ բերելուն, խանդարում ե աշխարհը նոր կերպ վերաբաժանելուն, խանդարում ե տեր ու տիրականություն անելու իր ընդարձակ ներքին շուկայում, վոր այնքան անհրաժեշտ ե կապիտալիստներին, մանավանդ այժմ, տնտեսական ճգնաժամի կապակցությամբ»<sup>1</sup>:

Չպետք ե մոռանալ, վոր Խորհրդային Միությունն ապրում ե աշխատում ե կապիտալիստական շրջապատման պայմաններում, այն շրջապատման, վորը գաղանային ատելություն ե տածում դեպի բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետությունը:

Ընկեր Ստալինը կոմյերիտական ընկ. Իվանովին ուղղած նամակում գրել ե.

«Միծաղելի ե հիմար բան կլիներ աչքերը փակել կապիտալիստական շրջապատման փաստի հանդեպ ե մոտածել, վոր մեր արտաքին թշնամիները, որինակ, Փաշիստները չեն փորձի առիթ յեղած դեպքում ուղղական հարձակում գործել ԽՍՀՄ վրա»<sup>2</sup>:

«Աջ-սոցիալիստական բլոկի» ե դեխերսանտների, վնասարարների, լրտեսների, մարդասպանների մյուս բանդաների ինչպես նաև դեստապոյի, «Ինտելիջենս Սերվիսի»-ի, լեհական ու ճապոնական հետախուզությունները գործակալների դատավարությունները, վորոնք փորձում եյին իրենց Փաշիստ տերերի առաջադրանքով քայքայել մեր անտեսությունը, խախտել Խորհրդային Միության պաշտպանունակությունը, ազդեստրների առաջ ֆրոնտը բաց անել ԽՍՀՄ ներխուժելու ե խորհրդային իշխանությունը տապալելու համար, — այդ դատավարությունները ծա-

<sup>1</sup> Ստալին, Լենինիցի հարցերը, էջ 456, Հայկուսհրատ, 1937 թ.:

<sup>2</sup> Ընկ. Իվանովի նամակը ե ընկ. Ստալինի պատասխանը, էջ 14, Հայկուսհրատ, 1938 թ.:

ուսյում են վորպես հիշեցում կապիտալիստական շրջապատման մասին ե այն չարադործական պլանների մասին, վոր իմպերիալիստական պետությունները նյութում են Խորհրդային Միության դեմ:

Խորհրդային պանծալի հետախուզությունը, — վորին դեկավարում ե ժողովրդի հավատարիմ զավակ՝ ստալինյան ժողովրդը. Յեժովը, ջախջախեց սոցիալիստական-Փաշիստական բանդան ե դրանով իսկ սոսկալի հարված հասցրեց պատերազմի Փաշիստական հրձիգներին:

Ընկեր Ստալինը ընկ. Իվանովին ուղղած նույն նամակում մասնանշել ե, վոր սոցիալիզմի վերջնական հաղթությունը, վորը յենթադրում ե ԽՍՀՄ վրա ուղղական հարձակում կատարվելու սպառնալիքի կասեցումը, — հնարավոր ե.

«...միջազգային պրոլետարիատի լուրջ ջանքերը մեր ամբողջ խորհրդային ժողովրդի ելլ ալելի լուրջ ջանքերի հետ միացնելու կարգով միայն: Հարկավոր ե ուժեղացնել ու ամրապնդել ԽՍՀՄ բանվոր դասակարգի ինտերնացիոնալ պրոլետարական կապերը բուրժուական յերկրներին բանվոր դասակարգի հետ. հարկավոր ե կազմակերպել բուրժուական յերկրներին բանվոր դասակարգի քաղաքական ոգնությունը մեր յերկրի բանվոր դասակարգին՝ մեր յերկրի վրա ուղղական հարձակում լինելու դեպքում, ինչպես նաև կազմակերպել մեր յերկրի բանվոր դասակարգի ամեն տեսակի ոգնությունը բուրժուական յերկրներին բանվոր դասակարգին. հարկավոր ե ամեն կերպ ուժեղացնել ու ամրապնդել մեր Կարմիր Բանակը, Կարմիր Նավատորմը, Կարմիր Ավիացիան, Պաշտ-Ավիաբիմը: Հարկավոր ե մեր ամբողջ ժողովուրդը պահել մոբիլիզացիոն պատրաստակամության վիճակում՝ ուղղական հարձակման վտանգի դեմ-հանդիման, վորպեսզի վո՛չ մի «պատահականություն» ե մեր արտաքին թշնամիների վո՛չ մի ֆոկուս չկարողանա մեզ հանկարծակիի բերել...»<sup>1</sup>:

Խորհրդային Միության ժողովուրդները շատ լավ հիշում են ե կենսադործում են ընկեր Ստալինի իմաստուն ցուցումները՝ «մենք պայքարում ենք խաղաղության համար ե պաշտպանում ենք

<sup>1</sup> Ընկ. Իվանովի նամակը ե ընկ. Ստալինի պատասխանը, էջ 16—17, Հայկուսհրատ, 1938 թ.:

խաղաղութեան գործը: Սակայն մենք չենք վախենում սպառնալիքներից ու սպառաստ ենք հարվածով պատասխանելու պատերազմի հրճիղների հարվածին»: Յեւ յեթե ազրեսորը կամ ազրեսորների խումբը համարձակվի հարձակվել ԽՍՀՄ վրա ու պատերազմ մղել,—մեր սիրելի հայրենիքի զինված ուժերը, վորոնց ընկեր Ստալինն է կոփել և վորոնց Խորհրդային Միութեան առաջին մարշալ՝ ընկեր Վորոշիլովն է ղեկավարում, կհարողանան, հենվելով ամբողջ խորհրդային ժողովրդի ու միջազգային պրոլետարիատի անհնազանդ խորհրդային վրա, ջախջախել ու վոչնչացնել շափն անցկացրած կողոպտիչներին:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Գերմանիան պատերազմի վտանգի հիմնական ոջախն և Յեվրոպայում . . . . .	3
Իտալիայի զավթողական նկրտումները . . . . .	8
Լեհաստանի մեծապետական դիտավորութիւնները . . . . .	12
Ճապոնիան պատերազմի վտանգի հիմնական ոջախն և Հե- ռավոր Արևելքում . . . . .	14
Ազրեսիայի ուժեղացումը — ներքին դժվարութիւնները զուրս գալու վորոնումներ են . . . . .	17
Ազրեսորների բլոկի ներքին թուլութիւնը . . . . .	19
Գերմանիա . . . . .	19
Իտալիա . . . . .	21
Լեհաստան . . . . .	24
Ճապոնիա . . . . .	25
Պատերազմի Փաշխտական հրճիղների հետ համաձայնու- թեան գալու անգլիական քաղաքականութիւնը . . . . .	28
Ֆրանսիա . . . . .	41
ԱՄՆ-ի «չեղոքութեան» քաղաքականութիւնը . . . . .	46
Իսպանական ժողովրդի պայքարը Փաշիդի դեմ . . . . .	48
Դրութիւնը Չեխոսլովակիայում . . . . .	51
Լեհաստան և Լիտվա . . . . .	54
Չինական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը . . . . .	55
Ազրեսորների բլոկին դիմակայում և խողաղութեան բլոկը . . . . .	58



Թարգմանիչ Հ. Տ.-Հովհաննիսյան  
Խմբագիր Դ. Հարությունյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Մանվելյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արսվյան

Դիպլոմի լիազոր № 3327, հրատ. № 604  
Պատվեր № 138, տիրաժ 5.000  
Հանձնված է արտադրության 23/VIII 1938  
Ստորագրվել է տպագրելու 4/X 1938  
Գինը 80 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության  
հրատարակչության տպարան,  
Օնթևան, Ապովերդյան № 63



491

38-15  
a 195

ԳԻՆԸ 80 Կ.

2

807

11/1

**Т. КОРРАДОВ**

**МЕЖДУНАРОДНОЕ ПОЛОЖЕНИЕ**

Армгиз — Издательство полит. литературы  
Ереван, 1938